

ՄԵՐ ԱՆԿԻՆԵՆ

Հայաստանի Տնտեսությունը Յառաջխաղացքի մեջ

Պետություններու եւ դրամատուներու վարկանիշը ճշդող միջազգային Moody's գործակալութիւնը վերջերս բարձրացուց Հայաստանի կարողականութիւնը՝ բարելաւում տեսնելով երկրի տնտեսութեան զարգացման ուղղութեամբ: Ասոր կողքին կան նաեւ այլ ցուցանիշեր, որոնք կը հաստատեն տնտեսութեան մեջ նկատելի դրական միտումները:

Վերջին տուեալներու համաձայն տնտեսական աշխոյժութեան ցուցանիշ 8,1 տոկոս է, որ կը նկատուի շատ լաւ արդիւնք: Արդիւնաբերական արտադրանքի ծաւալի աճած է 16,1 տոկոս, շինարարութեան աճը՝ 4,1 տոկոս, առեւտուրի շրջանառութեան աճը՝ 9,1 տոկոս, ծառայութիւններու աճը՝ 14,9 տոկոս, միջին աշխատավարձի աճը՝ 8 տոկոս, արտահանման աճը՝ 19,5 տոկոս:

Հայաստան այցելող զբոսաշրջիկներու թիւը նոյնպէս աճ կ'արձանագրէ ամիսէ-ամիս: Տարուայ առաջին վեց ամիսներուն, նախքան զբոսաշրջութեան բուն եղանակի սկիզբը, այցելուները ծախսած էին 120 միլիոն տոլար աւելի գումար, քան նախորդ տարուայ նոյն ժամանակահատուածի ընթացքին:

Տնտեսական այս աշխուժութեան ու նաեւ հարկային եւ մաքսային եկամուտներու պիտոճեով նախատեսուած են աւելի մուտքերուն շնորհիւ, պետութիւնը ներկայիս Կեդրոնական Դրամատան մօտ ունի աւելի քան 600 միլիոն տոլարի պահեստային գումար: Այս բոլոր ցուցանիշերը նաեւ արդիւնք են պետական մակարդակով կոռուպցիայի վերացման եւ մսխումները կրճատելու նպատակով առնուած քայլերուն: Նախկին իշխանութիւններուն օրօք, շատ մը մեծ հարկատուներ իրենց պարտաւորութիւնները կը կատարէին բարձրաստիճան պաշտօնեաներուն՝ փոխանակ պետութեան: Այժմ խաղի կանոնները փոխուած են ու պետութեան ու հարկատուներու միջեւ միջնորդներու դերը վերացած է:

Պետութեան համար ապահով-

Շար.ը էջ 5

Փաշինեան. «Հայաստանի եւ Արցախի Իշխանութիւններու Միջեւ Անհամաձայնութեան Վերացման Լաւագոյն Միջոցը Արցախի Մէջ Կայանալիք Ընտրութիւններն Են»

«Հայաստանի եւ Արցախի իշխանութիւնների միջեւ որոշակի հարցերում կալ անհամաձայնութիւն, եւ այն վերացնելու լաւագոյն միջոցը գալիք տարի Արցախում սպասուող խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններն են», - Փարիզի մէջ լույս տեսնող Nouvelle d'Arménie պարբերականին տուած հարցազրոյցին մէջ յայտարարած է վարչապետ Նիկոլ Փաշինեան:

Լրագրողի հարցին, թէ Արցախի հետ յարաբերութիւններու սառեցում կը նկատուի, որո՞նք են տարածաշուկեան կէտերը, Հայաստանի վարչապետը պատասխանած է. - «Կարծում եմ, ճիշդ չէ ասել, թէ Արցախի հետ մեր յարաբերութիւնները սառել են, քանի որ ամէն օր տասնեակ պաշտօնեաներ մշտական կապի մէջ են, աշխատում են միասին: Պէտք է յստակ



ասել իրերը. Արցախի իշխանութիւնները երկար աշխատել են նախորդ կառավարութեան հետ՝ բոլոր հետեւանքներով, որ դա

կարող էր ունենալ: Այսօր Հայաստանում նոր իշխանութիւն է, եւ, բնական է, որոշակի հարցերում կալ անհամաձայնութիւն: Անհրաժեշտ է գործել այդ անհամաձայնութիւնները վերացնելու համար: Լաւագոյն միջոցը դրան հասնելու՝ եկող տարի սպասուող խորհրդարանական եւ նախագահական ընտրութիւններն են Արցախում: Այդ ընտրութիւնների արդիւնքում, որոնք կը լինեն ազատ եւ ժողովրդավարական, այդ անհամաձայնութիւնները դուրս կը գան»:

Nouvelle d'Arménie-ի թղթակիցը հետաքրքրուած է. - «Արդեօք այդ կը նշանակէ, որ «սթաթուս քոն» կը գերակշռէ ձեր յարաբերութիւններուն մէջ մինչեւ ընտրութիւնները»:

Փաշինեանը արձագանգած է.

Շար.ը էջ 5

Երեւանի Պատուիրակութիւնը Մասնակցեցաւ Արցախի Անկախութեան Օրուան Միջոցառումներուն



Ստեփանակերտի Վերածնունդի հրապարակէն սկսած քայլերը՝ Արցախի նախագահ Բակո Սահակեանի, ԳՂ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյեանի մասնակցութեամբ

Սեպտեմբեր 2-ին, Արցախի Հանրապետութեան անկախութեան 28-րդ տարեդարձի առթիւ մայրաքաղաք Ստեփանակերտի մէջ վաղ առաւօտէն մեկնարկած էին տօնա-

կան միջոցառումները: Արցախի նախագահ Բակո Սահակեանի, ՀՀ ԱԺ նախագահ

Շար.ը էջ 5

Մահացած է Հանրայան Երգիչ Ատիս Հարմանտեան



Սեպտեմբեր 1-ին, յետ երկարատեւ հիւանդութեան Լոս Անձեւելսի մէջ մահացած է յայտնի երգի Ատիս Հարմանտեան: Ընտանիքին կողմէ տարածուած տեղեկութեան համաձայն վերջին 15 տարիներուն Ատիս Հարմանտեան կը տառապէր քաղցկեղի հիւանդութեամբ:

Շար.ը էջ 5

ՆՈՐ ՍԵՐՈՒՆԴ ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՄԻՈՒԹԵԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՆԿԱՒՈՒԹԵԱՆ ՆՈՒԻՐՈՒԱԾ ՏԱՐԵԿԱՆ ՓԱՌԱՏՕՆԸ ԱՅՍ ՏԱՐԻ ՏԵՂԻ ՊԻՏԻ ՉՈՒՆԵՆԱՅ, ՈՐՊԷՍԻ ԲՈԼՈՐՍ ՄԱՍՆԱԿՑԻՆԶ ՎԱՐՉԱՊԵՏ ՓԱՇԻՆԵԱՆԻ ԺՈՂՈՎՐԴԱՅԻՆ ՀԱԻԱԶԻՆ

SUNDAY SEPTEMBER 22, 2019 AT 2:00 PM

ԳՐԱՆՏ ՓԱՐՔ ԼՈՍ ԱՆՉԵԼԷՍԻ ԲԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ

GRAND PARK AT LOS ANGELES CITY HALL

200 N. SPRING STREET LOS ANGELES, CA 90012

ՀԱՅԱՍՏԱՆԵԱՆ ԼԵՐՔԻՆ ԼՈՒՐԵՐ

«Էլարտ»-ի Փորձագետ. «Լիտիան»-ի Շրջակայ Միջավայրի Կրայ Ազդեցութեան Գնահատումը Թերի է



Ամուլսարի հարցին շուրջ տեսահաղորդակցութեան մասնակիցները

«Էլարտ»-ի միջազգային խումբը յայտարարած է, որ չի կրնար պատասխանել հարցին, թէ արդեօք անվտանգ է Ամուլսարի հանքի շահագործումը, քանի որ «Լիտիան»-ի ուսումնասիրություններն ու շրջակայ միջավայրի վրայ ազդեցության գնահատումը (ՇՄԱԳ) թերի են, ոչ ամբողջական ու անվստահելի:

«Լիտիանի ՇՄԱԳ-ը թերի է եւ թույլ չի տար կուռ կերպով գնահատել կամ քանակական գնահատական տալ ազդեցության մասին: Մեր յանձնարարությունն էր՝ գնահատել արժանահաստությունն ու վստահելու թիւնը անոնց շրջակայ միջավայրի վրայ ազդեցության գնահատման: Պատասխանը հետեւեալն է՝ մենք չկարողացանք գնահատել՝ ելլելով բոլոր թերություններէն», - 2,5 ժամ տեւած տեսահաղորդակցութեան ընթացքին յայտարարած է «Էլարտ»-ի փորձագետներէն Զրաբերկրաբան Նիտալ Ռապահը:

Տեսահաղորդակցութիւնը տեղի ունեցած է կառավարութեան ներս՝ «Էլարտ»-ի 8 փորձագետներու, «Լիտիան»-ի ներկայացուցիչներու, Հայաստանի կառավարութեան պատասխանատու գերատեսչութիւններու ու խորհրդարանական «Իմ քայլը» եւ «Բարգաւաճ Հայաստան» խմբակցութիւններու ներկայացուցիչներու մասնակցութեամբ:

Արձագանգելով վարչապետի ճշգրտան Նիտալ Ռապահը նշած է. - «Անոնց գնահատումը, անոնց ուսումնասիրությունները, անոնց հետաքննությունները՝ ըլլալ ընկերային թէ բնապահպանական ազդեցութեան, վստահելի չեն»:

Եթէ գնահատումները թերի են, ինչպէ՞ս կը խօսին ռիսքերու կառավարման, մեղմման միջոցներու մասին, հետաքրքրուած են

պատգամաւորները: Ռապահը պատասխանած է, թէ իրենց առաջարկները ընդհանուր են, որ կը կիրառուին տարբեր երկիրներու մէջ հանքարդիւնաբերութեան մէջ. - «Ամէն տեղ նոյնն է: Պէտք է վերահսկել ջուրը հոսքը, պէտք է վերահսկել ստորերկրեայ ջուրերը, պէտք է ախտահարուած ջուրը նախքան միջավայր բաց թողելը մաքրել, գտել»:

Քննարկումէն պարզ դարձած է, որ Քննչական կոմիտէի յայտարարութիւնը, թէ հանքի շահագործման ռիսքերը կառավարելի են՝ «Էլարտ»-ի առաջարկած 16 մեղմման միջոցները կիրառելու պարագային, եւ որ այդ 16-էն 10-ը «Լիտիան»-ն արդէն իսկ ծրագրած է, խնդրալարուց է:

«Ինչպէ՞ս կարող է զպէս պատահել, որ նոյն փաստաթղթի մէջ «Էլարտ»-ը չտեսնէր, իսկ Քննչական կոմիտէն տեսնէր: Խնդրում եմ նախ «Էլարտ»-ի ներկայացուցիչները պատասխանեն», - ըսած է վարչապետ Փաշինեանը:

Նիկոլ Փաշինեանը հնչեցուցած է յաջորդ հարցը. եթէ կառավարութեան հրաւիրած փորձագետները կը խօսին շրջակայ միջավայրի վրայ ազդեցութեան գնահատման մէջ բազմաթիւ թերություններու մասին, իսկ այդ փաստաթուղթը 2016-ին դրական եզրակացութիւն ստացած է Բնապահպանութեան նախարարութեանէն, ինչպէ՞ս կ'ըլլայ, որ Քննչական կոմիտէն եզրակացնէ, թէ հանքի շահագործման ռիսքերը թաքցնող պաշտօնեայ չկայ:

Տեսահաղորդակցութիւնը եզրափակուած է որոշմամբ՝ սպասել Շրջակայ միջավայրի նախարարութեան արձագանգին, թէ արդեօք նոր գնահատման կարիք կայ: Պատասխանը մինչեւ Սեպտեմբեր 4-ը:

Հայաստանի Սեջ Կը Գերակշռեն Պետական Գրանցմամբ Ամուսնութիւնները

2019 Յունիսին Պրեւիսի իրականացուցած հետազոտությունները կը վկայեն, որ Հայաստանի մէջ գերակշռող է պետական գրանցմամբ ամուսնությունները:

Այսպէս, ներկայիս ամուսնացած է Հայաստանի չափահաս բնակչութեան 73,3%-ը, որմէ 43,8%-ի ամուսնությունները գրանցուած է միայն քաղաքացիական կացութեան գործերու գրանցման գործակալութեան մօտ (ՉԱԳՍ), իսկ 3%-ինը՝ միայն եկեղեցուց մօտ: Թէ՛ եկեղեցիի, թէ՛ ՉԱԳՍ-ի

մօտ ամուսնությունները գրանցած է 20,6%-ը: Հետաքրքիր է, որ 5,9%-ն ընդհանրապէս չէ գրանցած ամուսնությունները (փաստական ամուսնություններ):

60-էն բարձր տարիքային խումբին մէջ կը գերակշռեն քաղաքացիական գրանցմամբ ամուսնությունները (61,1%), իսկ միայն եկեղեցական ամուսնությունները համեմատաբար շատ են 18-30 տարեկաններու մօտ (6,5%): Թէ՛ եկեղեցուց, թէ՛ ՉԱԳՍ-ի մօտ իրենց ամուսնությունները գրանցածներուն

ՀՀ Վարչապետի Խօսնակի Կոշտ Պատասխանը Կիթալի Բալասանեանին

Հայաստանի Հանրապետութեան վարչապետի մամուլի խօսնակ Վլատիմիր Կարապետեանը անդրադարձած է Արցախի Հանրապետութեան անվտանգութեան խորհուրդի նախկին քարտուղար Վիթալի Բալասանեանի վերջին յայտարարություններուն: 168.am-ի հարցին, թէ ինչպէ՞ս կը մեկնաբանէք Վիթալի Բալասանեանի յայտարարություններն ու ձեւակերպումները, ըստ որոնց՝ ՀՀ կառավարութեան ֆինանսաւորմամբ արցախեան ընտրությունները երկու հասարակական կազմակերպություններու կողմէ դիտարկելը «անմիջական միջամտություն է Արցախի ինքնիշխանութեանն ու Սահմանադրութեան», թէ՛ «Նիկոլ Փաշինեանի բոլոր գործողությունները քրէօրէն հետապնդելի են» եւ «ՀՀ-ի ե՛ւ խորհրդարանը բռնազաւթուած է, ե՛ւ իշխանութիւնը, ե՛ւ 2018 թրուականի ԱԺ ընտրությունները եղած են անօրինական», Վլատիմիր Կարապետեանը պատասխանած է «



Վարչապետի մամուլի խօսնակ Վլատիմիր Կարապետեան

նութիւնների հետ: Յանկացած ժողովրդավարական պետություն ինքն է շահագրգիռ, որ իր մօտ տեղի ունեցող ընտրություններին հնարաւորինս շատ դիտորդներ մասնակցեն, որովհետեւ դա մեծացնում է ոչ միայն ընտրությունների վստահելու թիւնը, այլեւ տուեալ երկրի միջազգային հեղինակությունը, եւ յոյս ունենք, որ Արցախում կայանալիք ՏԻՄ եւ համապետական ընտրություններում դիտորդական առաքելութիւն իրականացնելու համար Արցախի իշխանութիւնները կը հրաւիրեն միջազգային դիտորդներ:

Գագիկ Խաչատրեանին Եւ Անոր Եղբորդիին Դէմ Մեղադրանք Առաջադրուած է

«Սուփրընախարար» անունը ստացած նախկին բարձրաստիճան պաշտօնեայ Գագիկ Խաչատրեանին եւ անոր եղբորդիին մեղադրանք առաջադրուած է: Նախաքննական մարմինը միջնորդութիւն ներկայացուցած է անոնց նկատմամբ կալանաւորումը որպէս խափանման միջոց ընտրելու վերաբերեալ: Տեղեկութիւնը «Ազատութեան» փոխանցած է փաստաբան Երեմ Սարգսեանը:

Վերջինիս փոխանցմամբ Գագիկ Խաչատրեանը կը մեղադրուի պաշտօնէական դիրքի չարաշահման եւ մեծ չափերու վատնման մէջ:

Փաստաբան Սարգսեանը բողոքարկած է Խաչատրեաններու ձերբակալման որոշումները, որոնք, ըստ երեւոյթին, պիտի քննուին կալանքի միջնորդություններու հետ: Յիշեցնենք, որ Ազգային անվտանգութեան ծառայությունը Գագիկ եւ Կարէն Խաչատրեաններուն ձերբակալած է Օգոստոս 27-ին: Նոյն օրը առաւօտեան խուզարկութիւններ կատարուած են անոնց պատկանող տարածքներուն մէջ: Անոնց առաջադրուած մեղադրանքը կ'առնչուի Գագիկ Խաչատրեանի՝ Պետական եկամուտներու կոմիտէի նախագահ եղած ժամանակահատուածին ենթադրեալ յանցանք կատարելուն: Ըստ նախնական տեղեկություններու, Պետական եկամուտներու կոմիտէին (ՊԵԿ) մօտ գրանցուած են աշխատակիցներ, որոնց աշխատավարձ փոխանցուած է, սակայն իրականութեան մէջ աշխատանքի չեն յաճա-

խած: Գագիկ Խաչատրեանը 2008 թրուականին սկսեալ զբաղեցուցած է Պետական եկամուտներու կոմիտէ (ՊԵԿ) նախագահի պաշտօնը, իսկ 2016-էն ղեկավարած է միաւորուած ՊԵԿ-ն ու երեւմտի նախարարութիւնը, որ ընդդիմադիրները կ'անուանէին «սուփրընախարար»: Բացի դա, ՀՀ վարչապետը Օգոստոսի 5-ին Ստեփանակերտի վերածննդի հրապարակում Արցախի ժողովրդի առաջ պարտաւորուել է լինել նրանց ազատ կամքի արտայայտման երաշխաւորը, ինչը ցնծութեամբ է ընդունուել հաւաքի բազմահազար մասնակիցների կողմից: Եւ վերը նշուած որոշումն այդ պարտաւորութեան կատարմանն ուղղուած քայլերից է:

Ինչ վերաբերում է նրան, որ Վիթալի Բալասանեանը վարչապետ Փաշինեանին մեղադրում է իշխանութիւնը բռնազաւթելու մէջ, դա ըստ էութեան նշանակում է, որ Բալասանեանը Հայաստանի ժողովրդին է մեղադրում ՀՀ-ում իշխանութիւնը բռնազաւթելու մէջ, որովհետեւ Հայաստանում տեղի ունեցած քաղաքական փոփոխությունների հեղինակը ժողովուրդն է: Իսկ ժողովրդին իշխանութիւն բռնազաւթելու մէջ կարող է մեղադրել միայն կեղծիքների, սպանությունների, քորուփցիայի միջոցով իշխանութիւնը նախկինում բռնազաւթած եւ ներկայումս իր դատին սպասող լուսանցքային խմբակի կողմից ոգեշնչուած անձը»:

մէջ արդէն առաջին տեղը 31-45 տարիքային խումբը կը գրաւէ (34,3%): Եւս մէջ հետաքրքիր տուեալ. միայն քաղաքացիական ամուսնությունները գրանցածները աւելի շատ

գիւղական բնակավայրերուն մէջ են (51,4%), իսկ միայն եկեղեցական ամուսնությունները գրանցածներու թիւի տարբերությունը քաղաքային եւ գիւղական բնակավայրերուն մէջ աննշան է:

ԼՈՒՐԵՐ

Սահմանադրական Դատարանը Հակասահմանադրական ճանջցաւ Քոչարեանի Վիճարկած Երկու Յօդուածներն Մին



Սեպտեմբեր 4-ին Սահմանադրական Դատարանը հրապարակեց Հայաստանի երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի դիմումի քննութեան արդիւնքով կայացուցած որոշումը, որուն համաձայն, Քրէական դատավարութեան օրէնագիրքի՝ նախկին նախագահի վիճարկած յօդուածներէն մէկը՝ 35-րդը, ճանջցաւ երկրի Հիմնական օրէնքին չհամապատասխանող եւ անվաւեր, միւսը՝ 135-րդը՝ Սահմանադրութեան համապատասխանող:

Մարտ 1-ի գործով սահմանադրական կարգի տապալման մէջ մեղադրուող եւ կալանքի տակ գտնուող նախկին նախագահը բարձր դատարանէն խնդրած էր ստուգել Քրէական դատավարութեան օրէնագիրքի՝ խափանման միջոց կիրառելու հիմքերու եւ քրէական գործի վարոյթը կամ քրէական հետապնդումը բացառող հանգամանքներու մասին յօդուած-

ներու սահմանադրականութիւնը: Քրէական դատավարութեան օրէնագիրքի 35-րդ յօդուածը կը վերաբերի քրէական գործի վարոյթը կամ քրէական հետապնդումը բացառող հանգամանքներուն, 135-րդ յօդուածը՝ խափանման միջոց կիրառելու հիմքերուն:

ՀՀ գլխաւոր դատախազութիւնը իր դիրքորոշումը պիտի յայտնէ ՀՀ երկրորդ նախագահ Ռոպերթ Քոչարեանի գործով Սահմանադրական դատարանի որոշումը ամբողջութեամբ ունենալէ ետք: «Արմէնփրես»-ի հետ զրոյցի ժամանակ այս մասին ըսած է ՀՀ գլխաւոր դատախազութեան հանրային կապերու բաժնի պետ Արեւիկ Խաչատրեանը:

«Մի որոշման հնարաւոր հետեւանքներու մասին կարելի է խօսել միայն այդ որոշումն ամբողջութեամբ ունենալու դէպքում: Հետեւաբար՝ մինչ այդ ոչինչ ասել չենք կարող», - ըսած է Խաչատրեանը:

«Քոչարեանի Փաստաբանները Սէկ Խնդիր Կը Լուծեն՝ Թոյլ Չտալ, Որ Մարտ 1-ի Գործով Դատաքննութիւնը Սկսի»: Անդրանիկ Քոչարեան

«Որոշմանը պէտք է խորութեամբ ծանօթանամ, որպէսզի գնահատական տամ», - խորհրդարանէն ներս, լրագրողներու հետ զրոյցի ժամանակ ըսած է ԱԺ պաշտպանութեան եւ անվտանգութեան հարցերու մշտական յանձնաժողովի նախագահ Անդրանիկ Քոչարեանը՝ պատասխանելով Ռոպերթ Քոչարեանի գործով Սահմանադրական դատարանի այսօր հրապարակած որոշման, որ մասամբ բաւարարեց Ռոպերթ Քոչարեանի փաստաբաններու դիմումը:

Անդրանիկ Քոչարեանը այս որոշման մասին նախնական գնահատականներ չէ ուզած հնչեցնել: Aravot.am-ի հարցին Ռոպերթ Քոչարեանի փաստաբանական խումբի անդամը մեկնաբանելով Սահմանադրական դատարանի որոշումը ըսաւ, որ իրենց պաշտպանելի նկատմամբ կալանքը մինչ այժմ իրաւաչափ չէ եղած եւ, փաստօրէն, Ռոպերթ Քոչարեան պէտք է ազատ արձակուի, Անդրանիկ Քոչարեանը պատասխանած է՝ կրնան մեկնաբանել ինչպէս իրենք կ'ուզեն, որովհետեւ ատոր համար իրենք կը վարձատրուին. «Իսկ իրաւական առումով, պէտք է հասկանալ, թէ ի՞նչ խնդիրներ կարող են առաջանալ այս գործընթացի ընթացքում: Ինձ համար, շատ կարեւոր էր, որ ՄԴ-ն այս գործընթացում չհան-



Ազգային ժողովի պատգամաւոր Անդրանիկ Քոչարեան

դիսանար խոչընդոտ մեր հասարակութեան համար, որպէսզի ինքը հասկնար հնարաւորութիւն իմանալ, թէ Մարտի 1-ին ինչ է տեղի ունեցել: Մենք ուզում ենք Մարտի 1-ի լիարժէք բացառատուում»: Անդրանիկ Քոչարեանի համոզմամբ, Ռոպերթ Քոչարեանի փաստաբանական խումբը մէկ խնդիր կը լուծէ՝ թոյլ չտալ, որ Մարտ 1-ի գործով դատաքննութիւնը սկսի կամ սկսի այնպէս, որ իրենք հնարաւորութիւն ունենան խոչընդոտել վկաներու՝ դատարան գալը:

«Ինքնիշխանութիւն, Համահայկականութիւն Եւ Փոխգործակցութիւն»: Մնացականեան Ներկայացուցած է Հայաստանի Արտաքին Քաղաքականութեան Սկզբունքները



Նախարար Զոհրապ Մնացականեան ելոյթ կ'ունենայ Հայաստանի դիւանագետներու ամենամեայ համաժողովի ընթացքին

Հայաստանի արտաքին գործոց նախարար Զոհրապ Մնացականեանը Ազգային ժողովէն ներս ՀՀ ԱԳ-ն կեդրոնական մարմնի եւ օտարերկրեայ պետութիւններուն մէջ ՀՀ դիւանագիտական ծառայութեան մարմիններու ղեկավարներու ամենամեայ համաժողովի մասնակիցներու հանդիպման ներկայացուցած է Հայաստանի արտաքին քաղաքականութեան երեք արժէքներն ու երեք սկզբունքները:

«Մենք առանձնացրել ենք արժէքների երեք հարթութիւն, որոնց վրայ հիմնուած է մեր արտաքին քաղաքականութիւնը: Դրանք են քաղաքակրթական արժէքները, մեր պատմական ժառանգութիւնը եւ ժամանակակից ժողովրդավարութեան եւ մարդու իրաւունքների արժէքները, որոնք մեր ժողովուրդը պաշտպանեց եւ նոր որակ հաղորդեց թաւաշէյ յեղափոխութեան եւ դրան յաջորդած խորհրդարանական ընտրութիւնների ժամանակ», - նշած է Մնացականեանը:

«Յատուկ պէտք է ընդգծեմ, որ այս համաժողովի ընթացքում մենք յստակ ամրագրեցինք Հայաստանի արտաքին քաղաքականութեան երեք հիմնարար սկզբունքները, որոնց կիրառմամբ պէտք է միջազգային ասպարէզում հետապնդենք Հայաս-

տանի եւ հայ ժողովրդի արժէքները եւ շահերը: Այդ սկզբունքներն են՝ ինքնիշխանութիւն, համահայկականութիւն եւ փոխգործակցութիւն», - աւելցուցած է ան:

Արտաքին գործոց նախարարը նաեւ կարեւորած է միջոցառման շրջագիրծէն ներս Ազգային ժողովի պատգամաւորներուն հետ բաց եւ անկաշկանդ քննարկումը:

«Ժողովրդավարական ընտրութիւնների միջոցով ընտրուած խորհրդարանի անդամները, որոնք իրենց գործունէութեան մէկ տարուայ մէջ արդէն հասցրել են լաւագոյնս պաշտպանել Հայաստանի շահերը եւ դառնալ Հայաստանի նոր դէմքը խորհրդարանական դիւանագիտութեան հարթակում, կարծում եմ, կը համաձայնուեն իմ այս դիտարկմանը», - նշած է Մնացականեանը՝ կարծիք յայտնելով, որ Ազգային ժողովը մեծ դերակատարում ունի Հայաստանի արտաքին քաղաքականութեան սահմանման եւ իրականացման բոլոր փուլերուն՝ կառավարութեան ծրագրի սահմանման, խորհրդարանական լսումներու միջոցով ծրագրի իրականացման ուղիներու ճշգրտման, ինչպէս նաեւ խորհրդարանական հարթակին վրայ անոր անմիջական իրականացման ժամանակ:

Թուրքիոյ Նախագահը Կարճ Զրոյց Ունեցած է Հայ Համայնքի Ներկայացուցիչներուն Հետ

Պոլսոյ Հայոց պատրիարքի տեղապահ Սահակ եպիսկոպոս Մաշալեանը եւ Սուրբ Փրկիչ հայկական հիւանդանոցի հիմնադրամի հոգաբարձուներու նախագահ Պետրոս Շիրինօղլուն մասնակցած են Թուրքիոյ յաղթանակի տօնի աւիթով մայրաքաղաք Անգարայի մէջ՝ նախագահական նստավայրին մէջ կազմակերպուած ընդունելութեան:

«Ակօս» պարբերականի հաղորդմամբ, հայ համայնքի ներկայացուցիչները կարճ զրոյց ունեցած են նախագահ Ռեճեփ Էրտողանի հետ: Նախագահը հետաքրքրուած է, թէ ինչպէս կ'ընթանայ նոր պատրիարքի ընտրութեան նախապատրաստական գործընթացը: Մաշալեանն ու Շիրինօղլուն տեղեկա-

ցուցած են, որ կը սպասեն ընտրութեան կայացման համար համապատասխան կանոնադրութեան: Էրտողանի պահանջով ներքին գործոց նախարար Սուլէյման Սոյլուն յայտնած է, թէ մէկ շաբթուայ ընթացքին փաստաթուղթը պիտի ուղարկուի պատրիարքարան: Արքեպիսկոպոս Մաշալեանը ընդհանուր առմամբ դրական գնահատած է այս հանդիպումը:

Յուլիս 4-ին, Պոլսոյ Հայոց պատրիարքարանէն ներս գումարուած Եկեղեցական համագումարին պատրիարքական տեղապահ ընտրուած է Սահակ եպիսկոպոս Մաշալեանը, ինչէն ետք պաշտօնապէս մեկնարկած է Պոլսոյ աթոռի 85-րդ գահակալի ընտրութեան գործընթացը:

ՄԱՍԻՍ
ԱՄԵՆԱԿԱՍՏԱՅԵԼԻ ԱՂԲԻՐԸ ՀԱՅՐԵՆԻ ԼՈՒՐԵՐՈՒ

Թորոնթոյի Միջազգային Շարժանկարի Փառատօնին Պիտի Յուլցադրուի Հայկական Յեղափոխութեան Մասին «Մենակ Չեմ» Ֆիլմը



Թորոնթոյի միջազգային շարժանկարի փառատօնին Սեպտեմբեր 7-ին պիտի ցուցադրուի կարին Յովհաննիսեանի «Մենակ չեմ» ֆիլմը՝ հայկական յեղափոխութեան մասին: Այս մասին «Ֆէյսպուք»-ի իր էջին գրառում կատարած է ՀՀ վարչապետ Նիկոլ Փաշինեանը:

«Ֆիլմի երաժշտութիւնը գրել է Սերժ Թանքեանը: Ֆիլմը իսկապէս շատ լաւն է ստացուել, եւ կարծում եմ՝ կ'ունենայ միջազգային յաջողութիւն՝ մեծացնելով Հայաստանի եւ հայ ժողովրդի ճանաչելիութիւնը ամբողջ աշխարհում», - գրած է ՀՀ վարչապետը:

Հայաստանի Տնտեսութիւնը

Շարունակուած էջ 1-էն

ուած այս յաւելեալ գումարները առիթ տուին, որպէսզի այս տարուայ ընթացքին բարձրանան կենսաթոշակները, գինուորականներու ամսականները ու Սեպտեմբերէն սկսեալ ուսուցիչներու աշխատավարձերը: Ասոնց կողքին մեծ զարկ կը տրուի նոր ճանապարհներու կառուցման եւ հիմներու վերանորոգման:

տեսէին, թէկուզ կարճ ժամանակուայ համար: 2018-ի յեղափոխութենէն ետք, շնորհիւ կառավարութեան վարած խիստ զգուշաւոր քաղաքականութեան, կարելի եղաւ խուսափիլ տնտեսական ցնցումներէ: Ընդհանրապէս, առաջին օրէն նկատելի էր վերընթաց տնտեսութեան գրեթէ բոլոր ճիւղերուն մէջ:

Այս բոլորը անշուշտ չեն բաւարարեր ժողովուրդի ակնկալիքները նոր իշխանութիւններէն ու տակաւին երկար ճամբայ կայանցնելիք՝ յաղթահարելու համար աղքատութիւնը, անհաւասարութիւնը ու աշխատանքային շուկայի անբաւարարութիւնը: Մինչ այդ սակայն, Հայաստանի տնտեսութիւնը նկատելի յառաջադարձ մէջ է ու երկրի ապագան յուսադրող:

«ՄԱՍԻՍ»

Երեւանի Պատուիրակութիւնը Մասնակցեցաւ

Շարունակուած էջ 1-էն

Արարատ Միրզոյեանի եւ հայկական երկու պետութիւններու բարձրաստիճան ալլ պաշտօնեաներու հետ Երեւանի քաղաքապետ Հայկ Մարտիրոսեանը եւ Երեւանի աւագանիի անդամները մասնակցած են աւանդական քայլեր թիւն:

Ստեփանակերտի վերածնունդի հրապարակէն քայլեր թիւն մասնակիցները հասած են մինչեւ քաղաքային յուսահամալիր, ուր ծաղիկներ խոնարհած են Հայրենիքի համար կեանքը զոհած հերոսներու յիշատակին: Տեղի ունեցած է նաեւ Պաշտպանութեան բանակի պատուոյ պահակախումբի հանդիսաւոր քայլեր թիւն:

Մահացած է Երգիչ Ատիս Հարմանտեան

Շարունակուած էջ 1-էն

Էստրատային երգերու աստղը ծնած էր 1945-ին Լիբանանի մայրաքաղաք Պէյրութի մէջ: Ան երգարուեստի դաշտ մուտք գործեց 60-ական թուականներուն «Ծաղիկներ» երգով, որ մեծ ժողովրդականութեան արժանացաւ ոչ միայն Լիբանանի մէջ, այլ եւ՝ սփիւռքի տարածքին: Հարմանտեան կը նկատուի

էստրատային երգերու ռահվիրան, որու շնորհիւ թրքական երաժշտութիւնը դուրս մղուեցաւ միջին արեւելքի շատ հայերու տուներէն: Հարմանտեան հրապարակած է աւելի քան 30 սկաւառակներ՝ 400 երգերով, որոնց շարքին «Գարուն-Գարուն» եւ «Նունէ» երգերը: Հարմանտեան արժանացած է բազմաթիւ մրցանակներու՝ արտասահմանի եւ Հայաստանի մէջ:

«Շուէտը Անկեղծ Հետաքրքրութիւն Յուլցաբերեց Մեր Երկրի Նկատմամբ» Արարատ Միրզոյեան

ՀՀ Աժ նախագահ Արարատ Միրզոյեանը Ֆէյսպուքի իր էջին մէջ կը տեղեկացնէ.

«Աւարտուեց Շուէտի խորհրդարանի նախագահ Անտրէաս Նորլէնի պաշտօնական այցը Հայաստան: Ուրախ էի Հայաստանում ընդունել իմ գործընկերոջը եւ նրան ուղեկցող խորհրդարանի երեք փոխնախագահներին ու բոլոր ֆրակցիաների ղեկավարներին, ծանօթացնել նրանց մեր մշակույթին ու պատմութեանը:

Մեր երկրում տեղի ունեցած ժողովրդավարական յեղափոխութիւնից յետոյ Շուէտը անկեղծ հետաքրքրութիւն ցուցաբերեց մեր երկրի նկատմամբ եւ պատրաստակամութիւն յայտնեց աջակցել մեր բարեփոխումներին:

Որպէս այդ պատրաստակամութեան գործուն ապացոյց՝ Շուէտը նախորդ տարի մաս կազմեց

մեր Ընտրական համակարգին աջակցող միջազգային ծրագրին եւ այժմ մասնակցում է ՀՀ Ազգային ժողովի կարողութիւնների ընդլայնման աջակցող մէկ այլ ծրագրի:

Բացի այդ, երկու ամիս առաջ Շուէտ կատարած իմ այցի վերջին օրը՝ Յունիսի 13-ին, Շուէտի կառավարութիւնը փոփոխութիւն կատարեց իր համապատասխան փաստաթղթում (Swedish Reform Cooperation in Eastern Europe, Western Balkans and Turkey 2014-2020)՝ հնարաւորութիւն բացելով Հայաստանին ցուցաբերուող նիւթական աջակցութիւնն ընդլայնելու համար: Ընթացքի մէջ են մի շարք համատեղ ծրագրերի մշակման աշխատանքները:

Շուէտը իրաւամբ համարում է հասուն ժողովրդավարութեան երկիր եւ ոգեւորիչ օրինակ է մեր համար»:

Անհամաձայնութեան Վերացման Լաւագոյն Միջոցը

Շարունակուած էջ 1-էն

- «Մեր յարաբերութիւնները փոխուած են ամէն օր: Դրանք լաւ են զարգանում: Ամէն օր մենք ներկայացնում ենք սկզբունքային հարցեր եւ գտնում ենք դրանց պատասխանները: Մենք կարծում ենք, որ բարեխառնումները Արցախում պէտք է նոյն կարգով ու թեմփով լինեն, ինչ Հայաստանում: Ի վերջոյ, մենք միասնականութեան մասին ենք խօսում, այնպէս չէ՞: Այդ միասնականութիւնը պէտք է մարմնաւորուի նախեւառաջ քաղաքական ու հանրային ներդաշնակութեամբ: Այժմ անհրաժեշտ է հաստատել ներդաշնակութիւն քաղաքական ոլորտում, Հայաստանի եւ Արցախի միջեւ քաղաքական բովանդակութեան մէջ... ես պէտք է ասեմ, որ համոզուած եմ՝ Հայաստանի եւ Արցախի հասարակութիւններն ներդաշնակութեան մէջ են, մնում է ներդաշնակեցնել կառավարման համակարգերը: Եւ այդ ներդաշնակութիւնը պէտք է խորանայ ամէն օր, ամէն կատարուած քայլի հետ: Այս գործընթացում, բնական է, կայ մօտեցումների տարբերութիւն: Բայց ի՞նչ ենք ուզում անել: Արդեօ՞ք ուզում ենք վարուել, ինչպէս առաջ: Թաքցնել ինդիւիդները: Խուսափել զրանցից խօսել: Բարձրագոյն կենացներ իմե՞լ եւ ձեւացնել, թէ ոչինչ չկա՞ց: Մենք կը շարունակենք կենացներ ասել միայն սեղանի շուրջ: Մնացեալ դէպքերում, մենք խօսում ենք ուղիղ, ամենայն անկեղծութեամբ, եւ գործում ենք»:

արհեստագիտութիւններով երկիրը: Ես արդէն բազմիցս ասել եմ՝ մեր ծրագիրը նրանում է, որ կարողանանք հասկացնել մեր բոլոր հնարաւոր հակառակորդներին, որ մենք՝ որպէս ժողովուրդ այնքան միասնական ենք, որպէս հասարակութիւն՝ այնքան համախմբուած, որպէս պետութիւն՝ այնքան հզօր, որ իմաստագուրկ է մեզ հետ պատերազմելը, որովհետեւ միակ էլքը կը լինի իրենց պարտութիւնը»:

Ի պատասխան լրագրողի հարցին, թէ արդեօք ճիշդ կը հասկնայ, որ անվտանգութեան հարցը կը կապուի տնտեսական զարգացման հետ, Փաշինեանը յստակեցուցած է. - «Այո, անկասկած: Աւելին, մենք չենք կարող այն կապել որեւէ այլ ոլորտի հետ այսպէս անմիջականօրէն: Զօրեղ դիւանագիտութիւն, հզօր բանակ ունենալու համար անհրաժեշտ են միջոցներ, որ գոյացնում է մեր տնտեսութիւնը: Իսկ ինչպէ՞ս է կառուցում մեր տնտեսութիւնը: Մենք չենք կարող կարգաւորել ռազմական հակամարտութիւնը եւ աշխարհաքաղաքական բարդութիւնները՝ յենուելով միայն ծիրանի արտահանմամբ զբաղող տնտեսութեան վրայ: Թիւրըմբում եմ, որ գիւղատնտեսութիւնը կարելոր է, այն կազմում է մեր Համախառն ներքին արդիւնքի (ՀՆԱ) 14 տոկոսը: Բայց սա հակամարտութիւն ունեցող երկրի տնտեսութիւնն է: Գիւղատնտեսական արտադրանքի ծաւալները պէտք է դեռ աճեն, քանի որ մեր երկրում շատ են անմշակ հողատարածքները: Անհրաժեշտ է մեծացնել գիւղատնտեսական արտադրանքի քանակը, բայց նուազեցնել նրա մասնաբաժինը ՀՆԱ-ում: Գիւղատնտեսութեան ոլորտն արտադրանքի եւ արտահանման քանակով պէտք է աճի 10 անգամ, բայց միեւնոյն ժամանակ պէտք է ՀՆԱ-ում իր կշիռը 14 տոկոսից հասցնի 1-ի՝ հնարաւոր բոլոր հետեւանքներով: Նոյնն է նաեւ հանքարդիւնաբերութեան դէպքում»:

«Արեւմտեան Ամերիկայի Համահայկական Խորհուրդ», ԹԷ՞ Հայկական Կազմակերպութիւններու Խորհուրդ

ՅԱՐՈՒԹ ՍԱՍՈՒՆԵԱՆ
«Քալիֆորնիա Քուրիըր» թերթի
հրատարակիչ եւ խմբագիր
www.TheCaliforniaCourier.com

15 Օգոստոս 2019ին, ամերիկահայ քսան կազմակերպութիւններու համախմբուած յայտարարեց «Արեւմտեան Ամերիկայի համահայկական Խորհուրդ»-ի կազմութեան մասին:

Համախմբուած անդամներն են. Հայաստանեաց Առաքելական Եկեղեցի - Արեւմտեան Թեմ

Առաջնորդարան Հայոց Ա. Մ. Նահանգներու - Արեւմտեան Թեմ

Հիւսիսային Ամերիկայի Հայ Աւետարանական Միութիւն

Հիւսիսային Ամերիկայի Տիրամայր Նարեկի Հայ Կաթողիկէ Թեմ

Արեւմտեան Ամերիկայի Հայ Յեղափոխական Դաշնակցութիւն

Ռամկավար Ազատական Կուսակցութիւն - Արեւմտեան Ամերիկայի Շրջան

Արեւմտեան Ամերիկայի Հայ Օգնութեան Միութիւն

Հայկական Բարեգործական Ընդհանուր Միութիւն - Արեւմտեան Շրջան

Ամերիկայի Հայ Աւետարանական Ընկերակցութիւն

Հայ Մարմնակրթական Ընդհանուր Միութիւն - Արեւմտեան Նահանգներու Շրջան

Արեւմտեան Ամերիկայի Համագլխային Հայ Կրթական եւ Մշակութային Միութիւն

Արեւմտեան Ամերիկայի Հայ Երիտասարդաց Դաշնակցութիւն

Միացեալ Հայ Երիտասարդներ

Արեւմտեան Ամերիկայի Հայ Դատի Յանձնախումբ

Ամերիկայի Հայկական Համագումար - Արեւմտեան Շրջանային Գրասենեակ

Հայ Իրաւաբանական Միութիւն

Պոլսահայ Միութիւն

Լոս Անճելըսի Իրանահայ Միութիւն

Քալիֆորնիոյ Հայ Երիտասարդաց Միութիւն

Լոս Անճելըսի Իրաքահայերու Ընտանեկան Միութիւն

Ասոնք չարգարժան կազմակերպութիւններ են, որոնք հիանալի աշխատանք կատարած են Ամերիկայի հայկական համայնքի կեանքին մէջ:

Խորհուրդը յայտարարեց, որ

«համայնքային այլ կազմակերպութիւններ, որոնք կը փափաքին անդամակցել այս հաւաքական ջանքերուն եւ ունին առնուազն 300 գործօն անդամ, այսու կը հրաւիրուին մաս կազմելու Խորհուրդին»:

Նաեւ, Խորհուրդը բացատրեց, որ «այս Խորհուրդի խորհրդակցական բնոյթը եւ անոր որոշումները պարտադիր չեն որեւէ անդամ կազմակերպութեան համար: Ուստի, Խորհուրդի գոյութիւնը որեւէ իշխանութիւն չի շնորհեր անոր՝ Խորհուրդի անդամ կազմակերպութիւններու գործունէութեան նկատմամբ»:

Խորհուրդը յայտարարեց, որ իր առաքելութիւնն է՝

• Ծրագրել եւ իրագործել համահամայնքային բնոյթի աշխատանքներ:

• Քաջալերել հայութեան հաւաքական շահերն ու հայ համայնքի իրաւունքները առաջ տանող աշխատանքները եւ աջակցել անոնց:

• Քայլերու ձեռնարկել՝ դիմակայելու համար հայերու հաւաքական շահերուն եւ իրաւունքներուն հակասող գործողութիւններն ու ի գործ դրուած ճիգերը:

• Հաւաքագրել եւ կեանքի կոչել համայնքի հայութեան ներուժը՝ յանուն համայնքի շահերուն, այլեւ Հայաստանի եւ Արցախի հանրապետութիւններու բարօրութեան:

• Մնայուն կերպով ուշադրութիւն դարձնել հայ համայնքի հաւաքական բարեկեցութեան եւ ապահովութեան վրայ:

Ասոնք բոլորը արժանաւոր նպատակներ են՝ ի նպաստ տեղւոյն համայնքի, ինչպէս նաեւ յօգուտ Հայաստանի, Արցախի եւ Սփիւռքի շահերուն: Արդիւնքը միշտ հրաշալի կ'ըլլայ, երբ հայերը ձեռք ձեռքի տան: Ինչպէս բոլորս գիտենք՝ միասնութիւնը ուժ է: Հայերը որքան աւելի կազմակերպուած ըլլան եւ խօսին միասնական ձայնով, այնքան աւելի հզօր կ'ըլլան իբրեւ համաշխարհային ժողովուրդ:

Համահայկական Խորհուրդի անդամ կազմակերպութիւնները տեսակցեցան 16 Օգոստոս 2019ին, Քալիֆորնիոյ Պըրպէնք քաղաքի Արեւմտեան Թեմէն ներս եւ ստորագրեցին միացեալ յայտարարութիւն մը: Թէեւ ձեռնարկը յայտարարուած էր իբրեւ մամուլի ասուլիս:

Շար.ը էջ 17

Արցախի Հանրապետութեան Տօնն Է Այսօր



ԱԻԵՏԻՍ ՌԱԶՄԻԿ

Արցախի Հանրապետութիւնը (նախապէս Լեռնային Ղարաբաղի Հանրապետութիւն) դարձաւ 28 տարեկան:

Իրաւապէս չճանչցուած, բայց իրողապէս գոյութիւն ունեցող հանրապետութեան եւ անոր ժողովուրդին համար տօնական է այսօր, որովհետեւ երկիրը ծնաւ ծով արեան, անպարագրելի գոհաբերութեանց եւ քաղաքական փոթորիկներու միջով:

Արցախի պատմութիւնը կը յուշէ, որ 1750-էն ետք, երբ առաջին անգամ թաթար տարրեր թափանցեցին Արցախ, շրջանը խաղաղ ժամանակաշրջան մը չունեցաւ երբեք: Յարատեւօրէն եւ մնայուն կերպով լարուածութիւն կը տիրէր հոն՝ մերթ հասնելով արիւնալի մարտերու եւ մերթ փոխուելու կայունութեամբ հարցեր շրջանցելով:

Ի վաղուց անտի, ազերիական կողմին ցանկութիւնը եղած է հայաթափել շրջանը եւ իւրացնել զայն ամէն գնով: Հայկական արծուբեռնը «վիճելի տարածքներ» եզրոյթին տակ մնայուն օրակարգ եղած է քննարկումներու, տարախոհութեանց եւ ստէպ կատաղի մարտերու:

1905-ին եւ 1918-1920 թուականներուն հոն արձանագրուած բախումները, թուրք-ազերիական ճնշումներն ու սպառնալիքները յանգեցուցած են ժողովրդագրական պատկերին աստիճանական փոփոխութեան՝ ի վնաս բնօրրանի տէրերուն: Խորհրդային շրջանին, հակառակ «ինքնավար մարզ» կարգավիճակին, Արցախի հանդէպ Պաքուի լռիկ-մնջիկ «եղբայրական»

քաղաքականութիւնն էր տիրանալ Ղարաբաղին եւ կատարուած իրողութեամբ մը չբացնել հայն ու հայկականը լեռնակղզիին:

Սակայն, պատմութիւնը թաւալեցաւ այլ ուղղութեամբ: Արցախահայուն անտեղիտալի կամքն ու պայքարի ոգին, կեանքի դառն փորձառութիւնն ու համահայկական նեցուկը, ի դերեւ հանեցին օտարազգիներու անտախտ երազները: Երբ խաղաղութեամբ եւ բանակցութիւններու միջոցաւ հակառակորդը չուզեց ըմբռնել իրողութիւնը այնպէս՝ ինչպէս որ կայ, երբ ապաւինելով կոպիտ ոճին նախադասեց պատերազմը՝ քան կլոր սեղանը, ինքնըստինքեան վճռորոշ խօսքը տրուեցաւ մարտական գործողութիւններուն:

1988-ի առաջին փուլին, երբ Խ. Միութեան հովանիին տակ հնարաւորութիւն կար առկայ կնճիռը լուծել խաղաղ ճանապարհով եւ քաղաքակիրթ ձեւով, երբ Ստեփանակերտի պահանջած «միացում»ը կրնար իրագործուել ժողովրդավարութեան տրամաբանութեամբ եւ ինքնորոշման միջազգային իրաւունքով, անդին Պաքու յոխորտալից ոգիով, յոյսը դրած Անգարայի կամ Մոսկուայի թրքամէտ տարրերուն, նախընտրեց մերժել բանակցութիւնը եւ ասպարէզ կարգաւ հայութեան՝ պոռոտ-պոռոտ երազներով:

Արցախի շրջանը Հայաստանի մէկ անքակտելի մասնիկն է («Արեւելից Կողմանց» նահանգը): Չարախինդ տարրերու միտումը՝ սեպ խրել երկու հայկական միաւորներուն միջեւ, կտրականապէս մերժելի եւ պախարակելի վարքագիծ

Շար.ը էջ 17



MARONIAN
INSURANCE SERVICES

Since 1975, we have proudly served your health and life insurance needs.

We will continue to stand by your side and secure your **family** and **business** with our full range of insurance policies.

CALL US FOR A PERSONALIZED QUOTE

(818) 500 9585

805 E. Broadway, Glendale, CA 91205
sbmaronian@gmail.com
CA INSURANCE LICENSE # 0C99815

MaronianInsurance.com



HEALTH



LIFE



COMMERCIAL

Լոս Անճելոսի «Շողակաթ» Շարաթրեայ Նոր Վարժարանի Բացումը



Գպրոցական վերամուտի նախօրէին կը թա-մ շակու թա յին կեանքն սկսաւ վերաշխուժանալ կրկնուէլի հայաստան գաղութէն ներս: Արդարեւ «Շողակաթ» մանկա-պատանեկան մշակութային կեդրոնն օժտուեցաւ շաբաթօրեայ նոր վարժարանով մը: Այս կապակցութեամբ յատուկ հանդիսութիւն մը տեղի ունեցաւ կրկնուէլի Հայ Աւետարանական Եղբայրներու Եկեղեցիին մէջ Օգոստոսի 24ին, 2019:

Եկեղեցւոյ հովիւ Վեր. Տիգրան Շանլեան իր բացման խօսքին մէջ ջերմօրէն ողջունեց ներկաները եւ ըսաւ թէ «Շողակաթ» մանկա-պատանեկան մշակութային կեդրոնը Հայ Աւետարանական Եղբայրներու եկեղեցիին հովանաւորութեան ներքեւ, հոգեւոր սնունդին հետ զուգահեռ, կ'ուզէ ամբողջացնել իր առաքելութիւնը, կերտել տիրապար հայրերին, ծաղկեցնելու հայու ինքնութիւնը մատչելի սերունդին մօտ:

րուն հասակ առնող նոր սերունդին վրայ:

Իր հերթին Վեր. Միքայէլ Եռուտեֆեան բարձր գնահատեց «Շողակաթ»-ի նախաձեռնութիւնն ու հայ լեզուի պահպանման համար կրթօճախներու վերապահումը ազգօգուտ առաքելութիւնը: Ան իր ելոյթն աւարտեց ըսելով «Ոգեւորենք նոր սերունդը հայ ըլլալու հպարտութեամբ: Միւրեք հայ լեզուն, խօսինք հայերէն եւ պահպանենք մեր ինքնութիւնը»:

Սրտի խօսքով հանդէս եկաւ «Շողակաթ» մանկապատանեկան մշակութային կեդրոնի եւ շաբաթօրեայ վարժարանի վարիչ տնօրէնուհի Մարալ Թարխանեան-Օղիկեան: Իր ելոյթէն յայտնի եղաւ որ շաբաթօրեայ վարժարանի գործունէութիւնը պիտի ընդգրկէ հայերէն լեզուի ուսուցում՝ արեւելահայերէն եւ արեւմտահայերէն բաժիններով: Ուսման ծրագրին մէջ ընդգրկուած են նաեւ յատուկ դա-



ԱՄՆ-ի արեւմտեան շրջանի Հայ Աւետարանական համայնքի նախկին հովուապետ Վեր. Յովսէփ Մաթոսեան իր Օրհնութեան աղօթքով եւ նորաբաց կառուցի կարեւորութիւնը նշելով, յաջողութեան եւ բարի երթի մղովանքներ փոխանցեց հիմնարկի վարիչներուն:

Անգլերէն լեզուով ելոյթ ունեցաւ Ռոպին Էլմասեան եւ իր բարեմաղթութիւնները ըրաւ «Շողակաթ» մանկա-պատանեկան մշակութային կեդրոնին:

«Մասիս» շաբաթաթերթի անունով ելոյթ ունեցաւ Գաբրիէլ Մոլոյեան: Ան իր ուրախութիւնն ու գոհունակութիւնը յայտնեց ի տես սփիւռքի պայմաններուն մէջ, հայ լեզուի եւ ինքնութեան պահպանութեան գծով կատարուած նման նախաձեռնութիւններուն, որոնք իրենց դրական ազդեցութիւնը պիտի ունենան օտար ափե-

սապահեր սերմանելու հայ մշակոյթի աւանդները պատանիներու հոգիներէն ներս, երգի, երաժշտութեան, պարի եւ ասմունքի միջոցով, որոնք հայկական բարձրը եւ սովորութիւններու ծանօթացման հետ, մատղաշ նորահաս սերունդին մօտ պիտի ծաղկեցնեն հայու ինքնութիւնը:

Գործադրուեցաւ զեղարուեստական պատշաճ յայտագիր մը, մասանակցութեամբ Ա. Պուլպուլեանի (նուագ) եւ Աննա Սթեֆանիտի (մեներգ):

Սոյն կրթամշակութային միջոցառումն աւարտեցաւ Վեր. Յովհաննէս Մելգոնեանի ոգեւորիչ ելոյթով ու աղօթքով:

Գնահատելի միջոցառում մը արդարեւ: Բարի երթ եւ արգասաբեր ճանապարհ նուիրեալ նախաձեռնողներուն:

Գ. Մոլոյեան

Դիմատնայ Facebook

Վերջին տարիներուն, դիմատնայի գործածութիւնը հսկայաքաջ կը տարածուի: Միլիոնաւոր մարդիկ իրենց կարծիքները ազատօրէն կ'արտայայտեն դիմատնայի (Facebook) իրենց էջերուն վրայ: Այդ միլիոնաւորներու շարքին են նաեւ հայեր, աշխարհի շոր ծագերուն: Մինչ մէկ կողմէ լաւ է իմանալ թէ ի՞նչ կը մտածեն տարբեր երկիրներու մէջ գտնուող հայեր տուեալ հարցի մը մասին, սակայն դժբախտաբար, կը հանդիպին նաեւ երեւոյթներու, որոնք երբեք դրական չեն: Նշենք երու օրինակ:

1. Հայ տիկին մը իր դիմատնայի էջին վրայ կը գնահատէ նախագահ Տանըլտ Թրամփի գործունէութիւնը ու ինք կը գրէ ըսելով թէ հայ ժողովուրդը նախագահին հետ է:


Այդ տիկինը ազատ է իր տեսակէտը արտայայտելու որեւէ հարցի պարագային: Այս երկրի դեմոկրատական ու սահմանադրական օրէնքին մէջ տրուած է ազատութիւն քուէարկելու իր նախապիտան թեկնածուին կամ արտայայտել իր կարծիքը: Սակայն այդ տիկինը եւ իրեն նմանողներուն իրաւունք չի տրուիր խօսելու համայն հայութեան անունով: Պէտք է աւելի լրջանայ:

2. Երբ ԱՄՆի Քոնկրեսի երկու անդամներ՝ յանձինս Իլհան (Ilhan Omar) Օմարի, եւ Ռաշիտա Թլէյպի (Rashida Tlaib), որոշեցին այցելել Իսրայէլ, Իսրայէլեան կառավարութիւնը մերժեց անոնց անցազիր տալ, նախագահ Տանըլտ Թրամփի դրդումով: Յիշեցնենք, որ քոնկրեսականները երկուքն ալ իսլամ կրօնքին կը պատկանին եւ առաջինը ծնած է Սոմալիոյ մէջ, մինչ երկրորդին ծնողքը ծնած էր Պաղեստինի մէջ, իսկ ինք Տիթրոյ-



թի մէջ: Այստեղ կ'ուզեմ փակագիծ մը բանալ առ ի գիտութիւն այն անձերու որոնք դէմ կ'արտայայտուին արաբական պետութիւններու ու յատկապէս այլազգ կամ իսլամ ժողովուրդներու հանդէպ: Մեզի համար զարմանալին այդ լիբանանահայերու կեցուածքն էր, մանաւանդ անոնք պէտք է լաւ գիտակցին այն բարերար դերին, որ արաբ ազգերը (այլազգ պետութիւնները) կատարեցին, սիրաժօյրօրէն ընդունելով Մեծ Եղեռնէն ողջ մնացած հայ ինքնակները, ապաստան տալով անոնց եւ ինքնաձեռքով գտնուեց: Անոնք արտօնեցին մեզի ազատօրէն կիրարկելու մեր Քրիստոնէական կրօնքը, Առաքելական, կաթողիկէ եւ Աւետարանական, հիմնելու եկեղեցիներ ու դպրոցներ, ուր ազատօրէն կը դասաւանդուէին մեր կրօնքը, պատմութիւնն ու մշակոյթը:

Հետեւաբար, մեր առաջարկը այդպիսիներուն պիտի ըլլայ, որ նախքան իրենց կարծիքները դիմատնայի էջերով հանրութեան ներկայացնելը, ըլլան պարկեշտ ու շրջահայեաց եւ մտածեն թէ որքանո՞վ իրաւացի են իրենց միտքերը եւ ի՞նչպիսի հետեւանք կրնան ունենալ իրենց շրջապատին վրայ: ՎԱՀԷ ԱԶԱՊԱՀԵԱՆ



Monrovia-ի Dignity գերեզմանատան մէջ պիտի տրամադրուի յատուկ Հայկական բաժին մը որուն անունը պիտի ըլլայ Արարատ:

Ծառ լաւ պայմաններով եւ յարմար ամսական վճարումներով:


Նախքան Ձեր ծրագրերուն ու առաւելութիւններուն համար Ձեզի կատաշարկով՝

- 1- Ձեր պայմաններուն եւ ծախսերու հարմար ծառայութիւններ
- 2- Ունիք անախտաբար ու յուղարկարարութեան ծառայութիւններ յարմար գիններով

Մանրամասնութեան համար դիմել՝

ISABEL CRISTINA KEMANIAN
Pre-Planning Advisor

200 E. Duarte Rd., Monrovia, CA 91016
(818) 284-8754
Email: isabel.kemanian@sci-us.com



Massis Weekly

Volume 39, No. 32

Saturday, September 7, 2019

Pashinyan: “Iran is One Thing for Washington and Another for Armenia”

YEREVAN -- The United States is not pressuring Armenia to curtail its relations with neighboring Iran because of the U.S. sanctions against Tehran, according to Prime Minister Nikol Pashinyan.

In an interview with the French-Armenian magazine “Nouvelles d’Armenie” publicized by his press office on Saturday, Pashinyan was asked whether the sanctions are causing Armenian serious problems.

“I don’t want to make grandiose statements but our diplomats have succeeded in scoring a very important victory in this regard,” he replied. “Our American partners seem to have gotten a good grasp of the issue. They have started to understand that Iran is one thing for Washington and another for Armenia.”

“I can say that at the moment we are not subjected to any pressure [from the U.S.,]” added Pashinyan.

Parliament speaker Ararat Mirzoyan, a close associate of Pashinyan, made similar comments when he visited Washington and spoke at the Atlantic Council think-tank in July.

“We don’t want the United States to put pressure on Armenia for joining in its Iran sanctions agenda,” Mirzoyan said. He argued that Iran serves as one of his landlocked country’s two conduits to the outside world due to closed borders with the two other Muslim neighbors: Azerbaijan and Turkey.

U.S. National Security Adviser John Bolton discussed the U.S. sanctions with Pashinyan during an October 2018 trip to Armenia. Bolton said traffic through the Armenian-Iranian border will become a “significant issue” because Washington will be en-



forcing the sanctions “very vigorously.”

Pashinyan made clear afterwards that that his government will “deepen not only economic but also political relations” with Tehran. He paid an official visit to the Islamic Republic in February.

Pashinyan reaffirmed Yerevan’s strong interest in the implementation of Iranian-Armenian energy projects in an interview with leading Iranian media outlets cited by the Armenpress news agency on Monday. He noted with satisfaction the ongoing construction of a third transmission line that will link the Armenian and Iranian power grids.

The Armenian leader also pointed out that he has invited Iran’s President Hassan Rouhani to a summit of the Eurasian Economic Union that will be held in Yerevan next month. Iran and the Russian-led trade bloc signed a preferential trade agreement last year.

Artsakh Celebrates 28 Years of Independence



STEPANAKERT — On September 2, 1991, a joint session of the provincial and Shahumyan Regional Council of Deputies was held in Stepanakert, where the Declaration of Independence was adopted. From that day on, the modern history of Artsakh as an independent and sovereign state began. On December 10 of the same year, a referendum was held to confirm the independence of Artsakh. On that day, 99% of the population voted for independence.

Azerbaijan tried to eradicate Artsakh’s self-determination by force, but Artsakh was able to not only neutralize the Azeri invasions but to also liberate new territories and strengthen its independence.

On Monday, September 2nd, Artsakh President Bako Sahakyan issued a message to congratulate Armenians on the Day of Artsakh. “The path we walked hand in hand with our

Continued on page 4

GCC Armenian Genocide Commemoration Legislation Awaits Governor’s Signature

գտնուէի իրեն յայտնեցի թէ, կը
փափաքեմ գրութիւնները համախմ-
բել ու հրատարակել: Իսկոյն ու-
ղարկեց բոլորն ալ: Ուրախացած էր
յօդուածներու համախմբուած ձե-
ւով հրատարակուելու խորհուր-
դով: «Հայոց ցեղասպանութեան



մէջ հաստատութիւններու դերա-
կատարութիւնը», «Թրքական աղ-
բիւրներու մէջ հայոց ցեղասպա-
նութիւնը», «Զինակից պետութիւն-
ներու աղբիւրներու մէջ հայոց
ցեղասպանութիւնը» հատորները
հրատարակուեցան Աթիլլա Թուլ-
կանի եւ Ալի Չաքըրօղլուի թարգ-
մանութեամբ: Գեղասպանութեան
ուրացումը նիւթ առնող յօդուած-
ներու հաւաքածոն փոստոս որ ուշա-
ցաւ իմ բանտարկութեան եւ ապա
աքորուածութեան պատճառով: Կը
ցաւիմ որ շարքին չորրորդ հատո-
րը չեմ կրցած դրկել իրեն:



Organization of Istanbul Armenians
presents
**MEMORIAL TRIBUTE TO
PROF. VAHAKN DADRIAN
AND
PRESENTATION OF FIRST
OIA DADRIAN AWARD TO PROF. TANER AKCAM**




The Board of Trustees and the Executive Committee of the Organization of Istanbul Armenians extend you their cordial invitation to join us as we pay a memorial tribute and celebrate the life and work of the legendary scholar Prof. Vahagn Norayr Dadrian.

On the occasion of this solemn event, OIA Board is proud to announce that the initial presentation of the Annual OIA Vahagn N. Dadrian Genocide Scholarship Award will be made. This Award will be presented to outstanding and internationally prominent scholars whose research, writings and actions have advanced Vahagn N. Dadrian's vision of justice for and prevention of Genocides as well as promotion of human dignity.



The first recipient of this Award during this special evening will be none other than Prof. Taner Akcam a dear friend and colleague of Prof. Dadrian.



Reception following the program.

Your attendance and participation would be a great honor for the OIA as we commemorate this great Son of Bolis and the Armenian Nation.



The Master of Ceremonies for the evening will prominent attorney Garo B. Ghazarian, Esq.

The Special Memorial Tribute Event shall take place on Sunday, September 15th, 2019 at 6 P.M. at the OIA Center, "Kurian Terrace", 19726 Sherman Way, Winnetka, CA 91306

Զեր Ծանուցումները
Վստահեցէք
«Մասիս»
Շարաքաթերթին

«Յիշատակարանք Ձեռագրաց» Գարեգին Ա Յովսէփեանց Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ Ամթիլիաս 1951

«Վեհափառ Զայրապետը իր այս հատորին մէջ չէր առնորդ որեւէ յիշատակարան առանց նպատակի, առանց ընտրութեան, եւ յատկապէս առանց գրչագրական, մանրամասն կարգադրական ու պատմագիտական արժէք նկատելու»
ՍԻՍՈՆ ՍԻՍՈՆԵԱՆ

ԴՈԿՏ. ՋՈՒԷՆ Ա. ՔԶՆՅ.
ԱՐՁՈՒՄԱՆԵԱՆ

«Յիշատակարանք Ձեռագրաց» Ա Գատոր

1951 թուին իր կեանքի վերջալոյսին Կիլիկիոյ Կաթողիկոսութեան Անթիլիասի տպարանէն լոյս տեսաւ գիտնական Հայրապետ Երջանկալի յիշատակ Տ.Տ. Գարեգին Ա Յովսէփեանց Կաթողիկոսի սոյն երկի մեծածաւալ հատորը իբրեւ Հայրապետին գրական եւ ձեռագրագիտական վերջին երկը՝ 1255 երկախին էջերով: Զայն տեսաւ նաեւ ինք երբ անկողնոյ կը ծառայէր, կարծիրով ստորագրելէ ետք իր գործին տիրոջնաթերթը:



Հատորը Յիշատակարաններու ստուար հաւաքածոյ մըն է 5-րդ դարէն մինչեւ 1250 թուականը գրուած բազմաթիւ ձեռագիրներու, հաւաքուած ու դասաւորուած Հայրապետին կողմէ իր կեանքի երկար տարիներու ընթացքին, այցելելով հայերէն ձեռագիրներու մատենադարաններ՝ էջմիածնէն մինչեւ Երուսաղէմ, Եւրոպայէն մինչեւ Ամերիկա: Հեղինակ Հայրապետը բժախնդիր կերպով ընդօրինակած է յիշատակարանները եւ ուսում-նասիրած ձեռագիրները գանձնք բաղդատելով տպագրելու ձեռագրաց ցուցակներու հետ:

Քննիչական Զայրապետը

Գարեգին Ա Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ ծնած էր Ղարաբաղ 1867-ին, եւ կը վախճանէր Անթիլիասի հայրապետական իր բնակարանին մէջ 1952 Յունիսին, Նոր Կիրակիին Սուրբ Հաղորդութիւն ստանալէ ետք «Բաբգէն Ա եւ Գէորգ Ձ Կաթողիկոսներու պատրաստած հաղորդութեան, ձեռամբ Դերենիկ եպիսկոպոսի»: Սրբագանի մօտ կը գտնուէր Կիլիկիոյ Աթոռակից Բաբգէն Կաթողիկոսի սրբատուփին մէջ պահուած եւ Գէորգ Ձ Ամենայն Հայոց Կաթողիկոսին սրբագործուած Ս. Հաղորդութիւնը գոր էջմիածնէն Ս. Աթոռ բերած էր 1945 թուականին:

Գարեգին Կաթողիկոս Ս. էջմիածին Գէորգեան Հոգեւոր ձեմարանի ամենէն ընտիր եւ առաջին սաներէն եղաւ որ Տ.Տ. Մկրտիչ Նրիմեան Հայրիկի Կաթողիկոսութեան օրով Գերմանիա մեկնելով ստացաւ համալսարանական բարձրագոյն կրթութիւն: Լալիօսի կի Համալսարանին յանձնելով իր գերմաներէն աւարտաճառը՝ Die Entstehungsgeschichte des Monothelismus «Մի Կամ քի Վարդապետութեան Մագման Պատմութիւնը», եւ տիրանալով դոկտորական աստիճանին, կը վերադառնար Մայր Աթոռ: Եպիսկոպոս կը ձեռնադրուէր Տ.Տ. Գէորգ Ե Ամենայն Հայոց Կաթողիկոսն ու թեմական առաջնորդութիւն կը վարէր հայրենի թեմերէն ներս, կ'ըլլար հիմնադիր դասախօսներէն Երեւանի Պետական Համալսարանին, կը մասնակցէր Սարգարապատի կուրսին որպէս մեր օրերու Ղեկնող Երէցը, ինչպէս նաեւ Կարսի յանձնուծին՝ ազատելով բազմաթիւ հայ օրբեր: Վերջին շրջանին կը վարէր Ամերիկայի Արեւելեան թեմի առաջնորդութիւնը Կիլիկիոյ Կաթողի-

կոս ընտրուելէն առաջ: Հայ Եկեղեցու վերջին շրջանի պատմութեան մէջ Գարեգին Կաթո-ղիկոս Յովսէփեանց կը հանդիսանայ որպէս գիտնական ձեռագրագէտ եւ արուեստաբան հոգեւորական միջազգային բանասիրութեան չափանիշով:

Հատորին Պատրաստութիւնը ու Արժանիքը

Այս ընդարձակ հատորը որուն ութածալ էջերը իբրեւ Դպրեվանքի ուսանող ծալլելու բախտաւորութիւնը ունեցանք, երկու ժամանակաշրջաններու ընթացքին կատարուած գիտական աշխատանք մըն է, նախ մինչեւ 1934 թուականը, եւ ապա աւելի ուշ՝ 1945-էն ետք: Վեհափառ Հայրապետի բացատրութեամբ ձեռագրաց յիշատակարանները Հայաստանի, Կիլիկիոյ եւ հայ գաղթախոհի պատմութեան, գրականութեան, արուեստի եւ մշակութի կալուածներէն ներս գրաւոր աղբիւրներու համահաւասար արժէք կը ներկայացնեն: «Անոնք մեծ լոյս են տալիս նաեւ դրացի ազգերի հայոց հետ ունեցած պատերազմների եւ այլ յարաբերութիւնների մասին»:

Յիշատակարաններու գլխաւոր արժէքը կը կայանայ այն պատմական իրողութեան մէջ երբ անոնք յաճախ անձնական գրութիւններ ըլլալով ականատեսի կամ ակնառարկայի վկայութիւններ կը հանդիսանան՝ արձանագրուած ձեռագիրներու վերջաւորութեան: Զայնոք «մոզայիկի գոյնզգոյն քարերու» կը նմանցնէ Գարեգին Կաթողիկոս «իրենց բազմատեսակ մասոր տեղեկութիւններով», որոնց ի մի հաւաքելը, թուականներու եւ վայրերու դասաւորմամբ ճշդելը, պատմութեան կ'ընծայէ կորսուած դէպքերու եւ չյիշուած տեղերու եւ անուններու անփոխարինելի նիւթեր: Հատորին արժանիքներէն մին է նաեւ գեղարուեստական արժէք ներկայացնող մանրանկարներու 48 վերարտադրութիւնները: Իսկ ծանօթագրութիւններու շարքին կան բազմաթիւ անձանոթ եւ կամ օտար տիտղոսներ, որոնց ամենայն բժախնդրութեամբ Գարեգին Հայրապետ կը մօտենայ ստուգաբանելով իւրաքանչիւրը:

Աշխատանքին Շարունակութիւնը

Ինչպէս ըստեցաւ «Յիշատակարանք Ձեռագրաց» հատորը երկու ժամանակաշրջաններու ընթացքին գիրար լրացուցած խմբա-

ւորումներ են: Վեհափառ Հայրապետը իրեն գիտական աշխատակից նշանակեց Դպրեվանքի մեր գրաբարի եւ մատենագրութեան դասախօսներէն Սիմոն Սիմոնեան որ 1946 Յունիսին գործի լծուեցաւ հսկելու եւ լրացնելու մատենագիտական պրպտումները:

Սիմոնեանի վկայութեամբ «Վեհափառ Հայրապետը իր հատորին մէջ չէր առնորդ որեւէ յիշատակարան առանց նպատակի, առանց ընտրութեան, եւ յատկապէս առանց գրչագրական, մանրանկարչական ու պատմագիտական արժէք նկատելու»: Սոյն ակնարկէն իսկոյն կը յայտնուէր Գարեգին Կաթողիկոսի մասնագիտական մօտեցումը: 1934 թուականէն ետքն էր երբ Գարեգին Հայրապետ Տ.Տ. Նորէն Ա Մուրատբեկեան Ամենայն Հայոց Կաթողիկոսի Հայրապետական Նուիրակի պաշտօնով արտասահման կը գտնուէր, իր այցելութիւններու ընթացքին փնտած է եւ տեսած բազմաթիւ ձեռագիրներ՝ Միացեալ Նահանգաց Ամերիկայի, Եւրոպայի եւ Մերձաւոր Արեւելքի կեդրոններուն մէջ, որոնցմէ գրի առած է իր մօտ պակսող յիշատակարանները:

Երուսաղէմ՝ Գիտական Այցելութիւն

Գարեգին Հայրապետ հարկ էր անգամ մը եւս անձամբ Երուսաղէմ այցելելու ձեռագիրներու ուսումնասիրութեան եւ յիշատակարաններու ընդօրինակութեան համար 1947 թուի ամրան: Իր չորրորդ գիտական այցելութիւնը կ'ըլլար այս մէկը դէպի Երուսաղէմ իր յառաջացեալ տարիքին, այս անգամ որպէս Կաթողիկոս Մեծի Տանն Կիլիկիոյ: Իրեն կ'ընկերանային գիտական իր աշխատակիցը Սիմոն Սիմոնեան եւ Թորոնթո աբեղայ Փոստաճեան՝ իր գաւազանակիրը: Երուսաղէմի մէջ Գարեգին Վեհա-

փառ Սրբոց Յակոբ-եանց Վանքի 4000-ի հասնող ձեռագիրներէն ոմանք ի նորոյ քննած է Սիմոնեանի հետ, եւ Թորոնթո աբեղայ Փոստաճեանի ընդօրինակել տուած է ա'յն յիշատակարանները գորս հարկ տեսած էր իր 40 օրերու կեցութեան շրջանին:

Բովանդակութիւնը

Հատորը կը բովանդակէ 458 անհատ ձեռագիրներու յիշատակարաններ: Վերջաւորութեան՝ յաւելուածներ, տեղանուններու եւ անձնանուններու բարդ եւ բժախնդիր ցուցակներ: Հակառակ իր ութսունամեայ տարիքին Գարեգին Հայրապետ անձապէս կատարած է ընտրութիւնն ու դասաւորումը իր 1934 թուականէն առաջ հաւաքած, եւ յետագային մինչեւ 1948 աւելցուցած ձեռագրեալ եւ հրատարակեալ յիշատակարաններուն: Կոթողային այս հատորը արտաշխարհի մէջ միակը կը հանդիսանար, երբ Երեւանի Մեսրոպ Մաշտոցի անուան Մատենադարանի տնօրէն Փրոֆ. Լեւոն Սալիբեան նոյնքան արժեքաւոր եւ աւելի համապարփակ Մատենադարանի «Ժ-ԺԵ Դարերու Ձեռագիրներու» Երկու հատորներով կը հրատարակէր երկու տարի ետք: Բոլորը միասին կը կազմեն հոյակապ ամբողջութիւն մը որպէս աղբիւր անյայտ դէմքերու եւ դէպքերու:

Սիրարքի Տը Ներսէսեանի Վկայութիւնը

Վեհափառ Հայրապետի հիացող բանասէր գիտնական Սիրարքի Տէր Ներսէսեան «Յիշատակարանք Ձեռագրաց» հատորի մասին գրած իր գրախօսականով «Ամբողջ կեանքի մը երկար աշխատանքին արդիւնքը» կը տեսնէր

Շար.ը էջ 19

Կազմակերպութեամբ ՄԴՉԿ Սապահ Գիւլ Մասնաճիւղի
ՀԱՅ ՄՇԱԿՈՅԹԻ ԵՐԵԿՈՅ
Տեղի կ'ունենայ Շաբաթ, Հոկտեմբեր 5, 2019 երեկոյեան
Ժամը 7:30 -էն սկսեալ:
Մուտքի արժէք՝ \$65
Վայր՝ 9537 Shoshone Ave. Northridge, CA 91325
Տեղերը ապահովելու համար՝
Հեռ. 818-648-6270, 559-313-0147
ՃԱՇԱՑՈՒՑԱԿ: Ուրֆայի Քեպապ, Հալի Քեպապ, Աղցաններ
Քաղցրեղէն եւ Սուրճ

ARMENIAN CULTURAL NIGHT
Saturday, October 5, 2019 from 7:30 pm
MENU: Ourfa Kabob, Chicken Kabob, Appetizers, Desert & Coffee
RSVP: by September 28, 2019
Tel: 818-648-6270, 559-313-0147
Donation: \$65
Wine & soft drinks are included.

Ի՞նչ Մարդահաճոյ Արարք

Ռ. ԿՈՐԻԻՆ

Ընկերական հանդիպում էր, գովասանք բաղուս սեղանի շուրջը բոլորած չորս հոգիներ էինք, իրիկ-նապահ էր, հայեացքս արեւմտակողմը նկատելի էր ցերեկն իր աւարտն է ապրում հրազունդին ճամբայ դնելով դէպի այն կոյսն աշխարհի հետզհետէ իր վրայ քաշելով սեւաթուղի շղարշը, մէկ խորհում ես այս երկնային, արեգակնային եւ լուսնային համաստեղութեան ու ցերեկ-գիշերուայ շուրջ, չես իմանում ինչ ասել, խելքդ ոչինչ չի կտրում, ես հօ ոչինչ, գիտնականներն էլ շարունակ քրքրում են, ամէն ինչ ծածուկ գաղտնապահութեան մէջ...

-Արման, ո՞ւր ես խորացել, յուշը բոլորովին մեր մօտ չի, առանձնացած, աչքերդ դէպի եթեր ի՞նչ ես փնտրում եւ մտածում:

Շահէնի յեղակարծ ձայնը սթափեցրեց նրան.

-Ոչինչ Շահէն, միայն մտածում եմ թէ այս գիշեր-ցերեկները մինչեւ ե՞րբ կը գան ու կ'երթան.

-Ախր ինչպէս չես իմանում, որ նրանք ընդմիշտ կը դառնան եւ վերջ չեն ունենայ, միայն թէ ինչ ու քեզ համար քանի կենդանի ենք, նրանից յետոյ չեմ իմանում ինչ ասել:

-Ինչ էք մխրճուել այդ փրկատիպական հարցերի մէջ, մեր ուղեղները շատ ճղճիմ են յայտնագործելու տիեզերքի դրուածքի գաղտնիքը, դուք էն Աստուածը մեր կեանքից, առօրեայից խօսէք: Արսէնն էր, միջամտեց ասե-

լով.
-Հիմա ձեզ կը պատմեմ ինչ պատահած մի դէպք, որը դարձել է անմոռանալի յուշ:

-Երկար ու ձիգ հինգ համարով ազատուողին ինքնաշարժով ընթանում էի առաջ, կինս կողքիս նստած, աջ աչքիս ծայրով ստուգելով ելքի (Exit) համարները, կինս զգուշացրեց որ հանդիպակացը մեր համարն է: Մեզանից առաջ մի մեքենայ սրընթաց թեքուեց դէպի այդ համարը արագ շարունակելով երթը մենք էլ նրա յետեւից, այդ միջոցին նկատեցինք նրա ինքնաշարժի ետեւի ձախ կողմի պատուհանից թղթեր, դրամներ եւ դրամաբանակ թիթեռնիկների նման թեւածեցին օդի մէջ, ինչ ազդանշան տուի նրան, որ կանգնի, սակայն անուշադիր հեռացաւ, այն բոլորը տարբեր գոյներով ծածկել էին ասֆալթապատ գետինը: Ես շատ զգուշ ճամբի մի կողմը քաշուեցի, իջայ մեքենայից, այդ վտանգաւոր ելքի երկարութեամբ մեքենավարներն ինչ նկատելով իրար ետեւից կանգնած ինչ թոյլ տուին ճամբի վրայ թափուած իրերը հաւաքեմ, նրանք կարծում էին, թէ իմ անձնական իրերն են, որոշները նոյնիսկ ինքնաշարժից իջած ինչ օգնեցին: Ամէն ինչ հաւաքած լցրեցի տոպրակի մէջ, կնոջս հետ որոշեցինք տանել եւ յանձնել ոստիկանութեան:

-Ոստիկանատնումն ենք, տեղեկատուական բաժնից մեզ ուղարկեցին գլխաւորի մօտ, բացատրում ենք մեր ներկայանալու նպատակը: Պատասխանատու ոստիկանի

կողմից ամէն ինչ ցուցակագրուեց՝ ամերիկեան շօշափելի գումար, ինքնաթիռով, վկայական եւ բանկային կարտեր եւ ինչ որ կար, անուս ազգանունս եւ հեռախօսահամարս արձանագրուեց, աֆիցեր ոստիկանը ինչ շնորհակալութիւն յայտնելով եւ գնահատելով իմ արարքս որպէս լաւ քաղաքացի յարգանքով ճամբայ դրեց: Մարդու կին ուրախ էինք, որ մի մարդահաճոյ արարք ենք կատարել:

-Դէպքից մի քանի օր էր անցել երբ հեռախօսազանգս հնչեց, համարը անծանօթ էր, սակայն միացրեցի.

-Ալլօ, լսում եմ:
-Դուք էք պրն. Արսէն Յովսէփեանը:

-Այո, ես եմ, ի՞նչ խնդիր կայ:
-Իմ անունս Ալբերտ Թուէնդի է, ձեր համարը ոստիկանատնումն է փոխանցել այն շատ կարեւոր իրե-

րի համար, որոնք դուք յանձնել էիք ոստիկանատնը: Հեռախօսել եմ, որ յատուկապէս շնորհակալութիւն յայտնեմ ձեզ, երախտապարտ եմ ձեր այդ մարդկային վեհանձն արարքի համար: Կ'ուզեմ ասել որ միայն բանաւոր շնորհակալութիւն յայտնելով չեմ գոհանայ, կնոջս հետ որոշել ենք ձեզ այցելել:

Նրանք նուէրներով եկան, մեծապէս յարգեցին մեզ այդպիսով ապացուցելով իրեց ազնիւ վերաբերմունքը ի դիմաց այդ մեր արարքի: Երբ իմացան մենք հայ ենք անկաշկանդ մեր միջեւ բարեկամական կապ ստեղծուեց շարունակ մեզ այցելելով:

Այդ օրուանից իմ մէջ առաւել հիմնաւորուեց, որ որեւէ արարք անպատասխան չի մնում, լաւը ուրախութիւն է բերում, վատը՝ տխրութիւն եւ մտահոգութիւն:

Գիրք Կ'ուզուի

Արուեստի գիրքերու յատուկ գրադարան մը հաստատուած է ՀԲԸ Միութեան Փաստօրինակի վերանորոգուած վաչէ եւ Թամար Մանուկեան կատարողական Արուեստից Կեդրոնին մէջ:

Այդ գրադարանին մէջ պիտի հաւաքուին հայկական թատերախաղեր, երաժշտական յօրինումներ եւ արուեստի վերաբերեալ գիրքեր: Իսկ անոր վերակացու նշանակուած է ՀԲԸՄ-Սաթամեան Թատերախումբի վարչութիւնը:

Վերոյիշեալ գրադարանին պիտի օգտուին աշխարհով մէկ ցրուած հայկական բոլոր մշակութային միութիւնները: Այս գրադարանը օգտակար պիտի հանդիսանայ նաեւ այն բոլոր հայկական թէ օտար դպրոցներուն, որոնց աշակերտները կը հետաքրքրուին թատերական, երաժշտական եւ կամ արուեստից ասպարէզով:

Գիրք նուիրողներէն կը խնդրուի կապ հաստատել ՀԲԸ Միութեան Արեւմտեան Ափի գրասենեակին հետ, հեռաձայնելով հետեւեալ թիւին: 626-794-7942. Անոնք կրնան նաեւ գիրքերը դրկել հետեւեալ հասցէին: AGBU Western District, 2495 E. Mountain St., Pasadena, CA 91104, Attn: Library.



WE LOVE YOU

19-րդ ԱՄԵԱԿԻ ԹԵԼԵԹՈՆ

Ի ՆՊԱՍՏ ԲԱՅԱՍՏԱՆԻ ԾՆՈՂԱԶՈՒՐԿ ԵՒ ԲԱՇՄԱՍԳԱՍ ԵՐԵՒԱՍԵՐԻ ԵՒ ՆՐԱՆՑ ՄԱՆԿԱՍՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈՂՈՒԹԵԱՆ

ARMENIAN AMERICAN ORPHANS DISABLED CHILDREN'S FUND

19th ANNIVERSARY TELETHON

5:00 P.M. - 11:00 P.M.

ON SEPTEMBER 8, 2019

WWW.FOROURKIDS99.COM

818-239-6880 • 818-246-0125 HOVANES

NON - PROFIT AND CHARITABLE ORGANIZATION 501© 3 CHARITY ID#27-1381531

MAIN SPONSORS

Արեւմտեան Ամերիկայի

Շարունակուած էջ 7-էն

լիս, սակայն, ներկայ գտնուող լրագրողներուն կարելիութիւն չտրուեցաւ հարցումներ ուղղելու եւ կարգ մը կարեւոր հարցեր յտակացնելու:

Ահա որոշ հարցեր, զորս կը փափաքէի բարձրացնել այս համաժողովին.

1) Ներկայիս ի՞նչ բան դրդեց այս կազմակերպութիւնները, որ ստեղծեն նման խորհուրդ մը:

2) Նախքան այսպիսի խորհուրդի մը ստեղծումը կամ վերստեղծումը, գրեթէ նոյն անդամակցութեամբ նման համախմբում մը գոյութիւն ունէր 2013էն 2015 թուականներուն՝ «Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի յանձնախումբ Արեւմտեան Ամերիկայ»-ի ներքոյ: Ինչո՞ւ վերջինս լուծուեցաւ 2015ին եւ վերստեղծուեցաւ հիմա՞ կորսնցելով չորս տարուան համագործակցութեան ջանքերու կարելիութիւնը: Իբրեւ հարիւրամեակի յանձնախումբի համանախագահներէն մէկը, ես բազմիցս յորդորած եմ խումբը, որ 2015ի՝ Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի աւարտէն ետք չլուծուի: Աւելին, ինչպէս ես տեղեկացուցած էի 8 Հոկտեմբեր 2015 թուակիր իմ խմբագրականին մէջ, թէ 26 Սեպտեմբեր 2015ին, Երեւան կայացած Հայոց Յեղասպանութեան 100-րդ տարելիցի պետական համաժողովին մէջ, 40 երկիրներու Հայոց Յեղասպանութեան յանձնախումբերու ներկայացուցիչներու մասնակցութեամբ ընդունուեցաւ բանաձեւ՝ կազմելու համար «Համահայկական խորհուրդ», որ կը յաջորդէ Հարիւրամեակի յանձնախումբին: Նշանակուեցաւ կազմակերպական կոմիտէ, որ բաղկացած էր Հայաստանի պետական բարձրաստիճան պաշտօնեաներէ եւ Սփիւռքի մեծ կազմակերպութիւններէ: Յաւոք, նախատեսուած Համահայկական խորհուրդը չիրագործուեցաւ եւ Հայոց Յեղասպանութեան հարիւրամեակի յանձնախումբի 40 մասնաճիւղերը լուծուեցան:

3) Եթէ նորաստեղծ Համահայկական խորհուրդի նպատակը Արեւմտեան Ամերիկայի մէջ հայ-

կական կազմակերպութիւններու համախմբման ստեղծումն է, ապա համայնքը արդէն ամբողջ մէկ տասնամեակ մը ունեցած է նման համախմբում, որ կը գործէ 39 հայկական կազմակերպութիւններէ բաղկացած «Լոս Անճելըսի Միացեալ հայկական խորհուրդի» ներքեւ:

4) Համահայկական նոր խորհուրդի անունը պէտք է ըլլար «Արեւմտեան Ամերիկայի հայկական կազմակերպութիւններու համախմբում»: «Համահայկական» կը նշանակէ՝ Արեւմտեան Ամերիկայի բոլոր հայերը կ'անդամակցին այս խորհուրդին, մինչդեռ վերը ներկայացուած են միայն կարգ մը կազմակերպութիւններու անդամներ: Հայերու մեծ մասը, որ որեւէ կազմակերպութեան մը անդամ չէ, ներկայացուած չէ այս խորհուրդին մէջ:

5) Թէեւ հայկական աւանդական քաղաքական երեք կուսակցութիւններէն երկուքը խորհուրդի մէջ են, երրորդը՝ Սոցիալ Դեմոկրատ Հնչակեան կուսակցութիւնը, չես գիտեր ինչո՞ւ, խորհուրդին մէջ ներկայացուած չէ: Կան նաեւ հայկական ուրիշ մեծ կազմակերպութիւններ, որոնք խորհուրդի անդամ չեն, ինչպիսիք են Հայկական մասնագիտական ընկերութիւնը եւ «Ամերիկայի հայ ճարտարագէտներ եւ գիտնականներ» կազմակերպութիւնը: Կարեւոր է նաեւ այն, որ Հայաստանէն Միացեալ Նահանգներ գաղթածներու հսկայական համայնքը պատշաճ կերպով ներկայացուած չէ խորհուրդին մէջ:

Վերջապէս, իսկական Համահայկական խորհուրդը, կամ նման անուն կրող կառուցը պէտք է ընտրուի Արեւմտեան Ամերիկայի կամ Սփիւռքի ամբողջ հայութեան քուէով, այլ ոչ թէ քանի մը կազմակերպութիւններու անդամներուն կողմէ: Միայն այսպիսի ժողովրդավարական կառուց մը կրնայ յաւակնիլ Սփիւռքի հայութիւնը ներկայացնելու եւ խօսելու անոր անունով:

Արեւելահայերէնի թարգմանց՝
Ռուզաննա Աւագեան
Արեւմտահայերէնի վերածոց՝
Սեդա Գրիգորեան

Արցախի Հանրապետութեան Տօնն Է Այսօր

Շարունակուած էջ 7-էն

է. իր սաղմին մէջ խեղդուելու արժանի մտմտութիւն: Անոր փաստը 1988-ի յատկորոշ կարգախօսն էր՝ «միացու՛մ» եւ ինչ անհեթեթութիւն պիտի ըլլար ուրիշ լոգունգ մը, այլ ծրագիր մը: Բայց, պայմաններու բերումով, միջազգային ընտանիքին համար ընդունելի եւ հասկնալի դառնալու որպէս հետեւանք՝ Արցախի ժողովուրդը 1991 Սեպտեմբեր 2-ին կատարեց հանրաքուէ եւ մեծամասնութեամբ դիրքորոշուեցաւ անկախութեան ի նպաստ: Ուրեմն՝ Անդրկովկասի մէջ ծնաւ նոր պետական միաւոր մը՝ Արցախի Հանրապետութիւնը: Եւ անկէ ետք՝ մինչեւ 1994 Մայիս 12-ի զինադադարը, այդ անկախութիւնը ամրապնդուեցաւ, կայացաւ եւ արմատաւորուեցաւ շնորհիւ բազմազգար հայրդիւններու արեւն, նահատակութեան, անհաւասար կռիւներու, որդեկորոյս մայրերու եւ որբերու: Հետեւաբար՝ անկախութիւնը ինքնեկ ընծայի նման չտրուեցաւ արցախահայուն, այլեւ՝ ծնաւ ցաւի եւ երկունքի ճամբով: Կարելի է բարձրաճակատ յայտարարել, որ այսօր, 1750-էն ի վեր, արցախահայութեան ամենաազատ եւ ամենանդորր ժամանակաշրջանն է՝ իր խրոխտ բանակով, պետական կառուցներով, դրօշով ու հիմնով, պինդ սահմաններով ու աճող ժողովուրդով: Ի հարկէ, «միացում»-ի ըզձալի հանգրուանին կրնայ փոխուիլ ամէն ինչ, բայց մինչ այդ՝ ապրող, արարող եւ կենսունակ հանրապետութիւն է Արցախը: Տեսնել ուղղորդներուն եւ կամ չուղղորդներուն համար՝ անժխտելի փաստ միանգամայն:

«ՅՈՂ ՅԱՆՃԱՆԵԼ»ՈՒ ՎԱՐԿԱԾԸ

Ուշագրաւ է, որ 1991-էն ետք երբ թէժ մարտեր կ'ընթանային եւ 1994-էն յետոյ երբ հայ-ազերի բանակցութիւններ կը կատարուէին, օրուան իշխանութիւններու ընդդիմադիր տարրեր, շահարկելով Ղարաբաղը, իշխանութեանց կը մեղադրէին «հող յանձնել» ու վերացական ենթադրութիւններով: Մինչեւ օրս, հակառակ Հայաստանի մէջ չորս դեկավարներու յաջորդական իշխանութիւններուն, նոյն մեղադրանքը կը կրկնուի առանց շօշափելի փաստերու: Ի՞նչպէս բացատրել որ ցարդ կամովին ոչ մէկ հող տրուած է թշնամիին, երբ ընդդիմադիր շատախօսներ, շողակրատներ միշտ ալ հրապարակը աղմկած են «հող յանձնել» ու վարկածով: Սա ամբոխավարութեան էժան մօտեցում է պարզապէս: Այս օրերուն եւս, օրուան իշխանութեան տարախօսներ, տե-

ղի-անտեղի փոթորիկ կը յարուցեն «հող յանձնել» յանկերգելով, ժողովուրդը գրգռելով, զգացումներ բորբոքելով, սին տեղ տրամադրութիւններ փճացնելով: Նորօրեայ շարլաթանութիւն մը, արդէն իմաստագրուած: Կը կարծենք, թէ ոչ մէկ հայ ղեկավար, պետական անձնաւորութիւն, սովորական քաղաքացի թէ զինուորական պաշտօնատար պիտի հող զիջէր հակառակորդին: Յատկապէս այն հողը՝ որ ձեռք բերուած է արեան գնով: Իրօք, սկսած է տհաճ հնչել նման խօսքեր, երեւակայական տեսութիւններ: Իսկ անոնք, որոնք այն քան մտահոգ են «հող յանձնել» ու հարցով, կրնան այդ հողը շէնացնել, ամրապնդել եւ կառուցել՝ առաւել համոզուելու, որ հողը կը պատկանի անոր վրայ ապրողին: Մանաւանդ յաղթանակով նուաճուած հողը:

ԴՐՈՒԱԳ ՍԸ

1918-ի փետրուարին, երբ կարին (էրզրում) քաղաքը հայկական հակալիւրին տակ էր, օսմանեան բանակը կը պատրաստուէր լախաժիր յարձակողականի. հոն գտնուող հայկական փոքրաթիւ ուժերու դեկավար գնդապետ Թորգոմ կը յայտարարէր Հայաստանի անկախութիւնը: Հապճեպ եւ պահի տակ կատարուած յախուռն քայլ մը: Այդ լայն ճակատին ընդհանուր հրամանատար նշանակուած եւ հայկական ինքնապաշտպանութիւնները կազմակերպելու նպատակով կարին ուղղուած Զօրավար Անդրանիկ երբ կը ժամանէ կարին եւ կ'իմանայ այդ ինքնաբուխ յայտարարութեան մասին, դիպուկ կերպով կ'ըսէ. «Մեզմէ ոչ ոք իրաւունք ունի անկախութիւն յայտարարելու, միայն իրաւունք ունի յաղթական բանակը»:

Այո, 1991 Սեպտեմբեր 2-ին անկախութիւն հռչակած Արցախի հայութիւնը բարոյական, իրաւական եւ ազգային-քաղաքական նախադրեալներն ու տուեալները ունէր անոր, որովհետեւ այդ օրերուն եւ անկէ ետք յատկապէս անոր բանակը կերտեց յաղթանակ յաղթանակի ետեւէ, իր որոշումը խարսխած էր միջազգային օրէնքի ինքնորոշման իրաւունքին վրայ, ազգայինկրօն ազան-մշակութային առումներով կը պատկանի հայութեան եւ ոչ մէկ աղերս Պաքուի հետ եւ վերջապէս քաղաքական արդարացի եւ իրաւացի կամքի արտայայտութիւն էր՝ զորս կը փայփայէր շուրջ երկուքուկէս դարէ ի վեր:

Բիւր ողջոյններ Արցախի Հանրապետութեան 28-րդ պանծալի տարեդարձին:

Հայ Եկեղեցու 20-րդ Դարի Նշանաւոր Գործիչներին Նուիրուած Գիտաժողովի 2019 Թ. Հոկտեմբերի 8, Լոս Անջելէս

Հայ Առաքելական Եկեղեցու ԱՄՆ Արեւմտեան թեմը Գերշ. Տ. Յովնան Արք. Տէրտէրեանի առաջնորդութեամբ եւ հովանաւորութեամբ 2019 թուականի հոկտեմբերի 8-ին Լոս Անջելէսի Սրբոց Ղեւոնդեանց Մայր Եկեղեցում կազմակերպում է գիտաժողով «Հայ Եկեղեցու նշանաւոր գործիչները 20-րդ դարում» թեմայով:

Գիտաժողովը առիթ է՝ ներկայացնելու վերջին հարիւրամեակի մեր անուանի հոգեւորական գործիչներին, որոնց շարքին են՝ Մկրտիչ Ա Սրբիմեան Հայրիկ, Գէորգ Ե Սուրբնեանց, Խորէն Ա Սուրբաբեկեան, Գէորգ Զ Չորեքեան, Վազգէն Ա Պալճեան, Գարեգին Ա Սարգիսեան կաթողիկոսներ, Գարեգին Յովսէփեանց, Գարեգին Եպս. Խաչատուրեան, Շնորհաբ. Գար. Գարուստեան, Թորգոմ Արք. Մանուկեան:

Մէկօրեայ գիտաժողովին «10 հոգեւոր սիւների» աւանդներին, գրական ու գիտական վաստակին նուիրուած առանձին զեկուցումներով հանդէս կը գան հոգորականներ ու հայագէտներ:

ՄԱՍԻՍ

ՇԱԲԱԹԱԹԵՐԹ

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹԵԱՆ ԿՏՐՕՆ

Yes, I wish to subscribe to Massis Weekly

Enclosed a check for (one year)

* \$50,00 * \$100,00 (first class) for USA

\$ 125,00 (Air Mail) for Canada.

\$ 250,00 (Air Mail) Overseas.

Name: -----

Address: -----

City: ----- State: ----- Zip Code: -----

Country: -----

Tel: ----- Email: -----

ՄԱՐԶԱԿԱՆ

Հենրիխ Մխիթարեանը Տեղափոխուեց «Ռոմա»

Իտալական «Ռոմա»-ն պաշտոնապես յայտարարեց Հենրիխ Մխիթարեանի տրանսֆերը վարձակալական հիմունքներով ձեռք բերելու մասին:

Պայմանագիրը նախատեսված է մինչև 2020 թվականի Յունիս ամիսը: Վարձակալության դիմաց լոնտոնցիները ստացել են 3 մլն. եվրո:

Համաձայն ՋԼՄ-ներում շրջանառու լուրերի, փաստաթղթում առկա է կէտ, ըստ որի եթե Հայ ֆուտպոլիստը նոր թիմի կազմում խաղադաշտում անցկացնի 25 եւ աւելի հանդիպում, ապա «գալները» հնարավորութիւն կ'ունենան ձեռք բերել Մխիթարեանի տրանսֆերը 10 մլն. եւրոյի դիմաց:

Հայազգի ֆուտպոլիստը հռոմէական գրանդում հանդէս կը գալ 77 համարի մարզաշապիկով:

Յաւելենք, որ Հայաստանի ազգային հաւաքականի աւագը «Արսենալ» է տեղափոխուել 2018 թվականի ձմեռային տրանսֆերային պատահանի ընթացքում: «Զինագործներ»-ի կազմում անցկացրել է 59 հանդիպում՝ դառնալով 9 կոլի եւ 13 կոլային փոխանցման հեղինակ:



ՈւեֆԱ-ի Նախագահը Կը Ժամանեց Երեւան

Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի հրահանգով ՈւեֆԱ-ի նախագահ Ալեքսանդր Չեֆերինը Սեպտեմբերի 5-ին ժամանած է Հայաստան ներկայ լինելու Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտում կայանալիք Հայաստան-Իտալիա հանդիպմանը: Այս մասին տեղեկացնում է Հայաստանի ֆուտպոլի ֆեդերացիայի պաշտօնական կայքը:



Հայաստան-Իտալիա խաղը Վազգէն Սարգսեանի անուան «Հանրապետական» մարզադաշտում կը կայանայ Սեպտեմբերի 5-ին, սկիզբը՝ ժամը 20:00-ին:

Ամերիկացի տարածքում խաղը ուղիղ կը ցուցադրուի ESPN_NEWS ալիքով, Լոս Անճելոսի ժամով առաւօտեան 9-ին:

«Արարատը» Յաղթեց «Գանձասար-Կապանին» Ու Պահպանեց Առաջին Տեղը

Ֆուտպոլի Հայաստանի բարձրագոյն խմբի առաջնութեան միանձեայ առաջատար Երեւանի «Արարատը» շարունակում է յաջող հանդէս գալ նոր մրցաշրջանում:

5-րդ տուրի խաղում արարատցիները հիւրընկալուելիս 1:0 հաշուով յաղթեցին «Գանձասար-Կապանին»: Միակ կոլը 52-րդ րոպէին խփեց Դաւիդ Խուրջման:

Այս յաղթանակից յետոյ «Արարատը» վաստակեց 13 միաւոր եւ կրկին բարձրացաւ 1-ին տեղ, որը որոշ ժամանակով զբաղեցրել էր Գիւմրիի «Շիրակը», որը պարտութեան էր մատնել «Ալաշկերտին» (2:1) եւ վաստակել էր 12 միաւոր:

Առաջնութիւնում այժմ երկշաբաթեայ ընդմիջում է յայտարարուել, քանի որ Սեպտեմբերի սկզբին Հայաստանի ազգային եւ երիտասարդական հաւաքականներն անցկացնելու են Եւրոպայի առաջնութեան հերթական ընտրական խաղերը:

«Փիւնիկը» Պայմանագիր է Կնքել Արաս Օզբիլիզի Հետ

«Փիւնիկ» ֆուտպոլային ակումբը պայմանագիր է կնքել 29-ամյա հայազգի կիսապաշտպան Արաս Օզբիլիզի հետ: Այդ մասին յայտնում է ակումբի մամուլի ծառայութիւնը:



Ֆուտպոլիստի վերջին ակումբը եղել է Ստամբուլի «Բեշիկթաշը», որը վերջերս ազատ գործակալի կարգավիճակ է տուել հայազգի խաղացողին:

Յիշեցնենք, որ Արաս Օզբիլիզը 2012թ-ից հանդէս է գալիս Հայաստանի հաւաքականում, որի կազմում մաս նակցել է 39 խաղի եւ դարձել 6 կոլի հեղինակ:

ԱՊԼ.

«Լիվերպուլը» Ակունբային Ռեկորդ է Գրանցել



Անգլիացի Պրեմիեր լիգայի չորրորդ տուրում «Լիվերպուլը» 3:0 հաշուով յաղթանակի հասաւ «Բարնլիի» նկատմամբ:

Այս յաղթանակը 13-րդ անընդմէջ յաղթանակն էր «Լիվերպուլի» համար Պրեմիեր լիգայում: Նախկինում երբեք ակումբը նման ցուցանիշ չի գրանցել:

Այժմ «Լիվերպուլը» գլխավորում է Պրեմիեր լիգայի մրցաշարային աղիւսակը: Եուրոգէն Կլոպի գլխավորած թիմը 12 հնարաւորից 12 միաւոր է վաստակել:

Լոնտոնեան Դերբիում «Արսենալ»-ը Ոչ-Ոքի Խաղաց «Տոտենհեմ»-ի Հետ

Անգլիացի առաջնութեան 4-րդ տուրում լոնդոնեան դերբիի շրջանակում «Արսենալ»-ը սեփական յարկի տակ ոչ-ոքի խաղաց «Տոտենհեմ»-ի հետ:

10-րդ րոպէին հիւրերին առաջ մղեց Էրիկսենը: 40-րդ րոպէին 11-մեթրանոցից իր թիմի առաւելութիւնը կրկնապատկեց Քեյնը: Ընդամենը 5 րոպէ անց Լյակազետը կրճատեց հաշուի տարբերութիւնը: Երկրորդ կէսում «զինագործներ»-ն աւելի ագրեսիւ խաղ ցուցադրեցին, ինչի շնորհիւ 71-րդ րոպէին Օսթէյնսը հաւասարեցրեց հաշիւը եւ իր թիմին փրկեց պարտութիւնից:

Տանտէրերի հայազգի կիսապաշտպան Հենրիխ Մխիթարեանը փոխարինման դուրս եկաւ 67-րդ րոպէին եւ ակտիւացրեց իր թիմի խաղը, բայց արդիւնաւէտ գործողութեամբ աչքի չընկաւ:

Այսպիսով, «Արսենալ»-ը 7 միաւորով կիսում է 4-5-րդ տեղերը, իսկ «Տոտենհեմ»-ը 5 միաւորով 9-րդ տեղում է:

Զիչարիտոն Վերադառնում է Սպանիա

«Վեսթ Հեմ»-ի յարձակուող Խալկեր Էրնանդեսը (Զիչարիտո) մօտ է «Սեւիլի» տեղափոխուելուն: Այս մասին յայտնում է Marca-ն:



Տրանսֆերի արժէքը ենթադրուում է, որ կը կազմի 10 միլիոն եւրո:

Մեքսիկացի ֆուտպոլիստին երեքամեայ պայմանագիր կ'առաջարկուի:

Յիշեցնենք, որ 2014/15 մրցաշրջանում Զիչարիտոն Լա Լիգայում վարձավճարով խաղացել է Մադրիդի «Ռեալ»-ի կազմում:

Զլատան Իբրահիմովիչի 23-րդ Կոլը 23 Խաղում

«Լոս Անճելոս Գելաքսի» շուէտ յարձակուող Զլատան Իբրահիմովիչը ՄԼՄ-ի կանոնաւոր առաջնութեան հերթական խաղում դարձել է կոլի եւ կոլային փոխանցման հեղինակ: Դա չի օգնել «Լոս Անճելոս Գելաքսիին» խուսափել պարտութիւնից «Սիեթլ Սանուդերսի» հետ խաղում՝ 3:4:

37-ամեայ ֆուտպոլիստը ՄԼՄ-ի ընթացիկ մրցաշրջանում մասնակցել է 23 հանդիպման, խփել նոյնքան կոլ: Արդէն չորրորդ խաղում անընդմէջ Իբրահիմովիչը խաղադաշտից չի հեռանում առանց կոլ խփելու:

Լաւագոյն ումբարկուն «Լոս Անճելոսի» 30-ամեայ մեքսիկացի յարձակուող Կարլոս Վելան է, որը 26 խաղում խփել է 27 կոլ:

US Open. Վաւրինկան 3-րդ Շրջանում Պայքարից Դուրս Թողեց Նովակ Ջոկովիչին

Շուէյցարացի թենիսիստ Ստեն Վաւրինկան դուրս եկաւ ԱՄՆ-ի Բաց առաջնութեան 4-րդ շրջանի յաղթելով մրցաշարի գործող ախոյեան սերբե Նովակ Ջոկովիչին, որը երկու սեթում պարտուեց 4:6, 5:7 հաշուով ու 1-2 հաշուի ժամանակ հրաժարուեց յետագայ պայքարից ձախ ուսի խնդիրների պատճառով: Հանդիպումը տեւեց 1 ժամ 46 րոպէ:

US Open-ի բաւորագր եզրափակչում վաւրինկայի մրցակիցը կը լինի ռուս թենիսիստ Դանիլ Մեդվեդեւը, որն առաջին անգամ է դուրս եկել Grand Slam-ի 2 եզրափակիչ:

Ձեր Արդարութիւնը Սկսուում Է Մեղայականից

Շարունակուած էջ 6-էն

դրանց հիման վրայ, թէ կամք ունես՝ կը յաջողես: Յաւօք՝ այս գրուածքի մասով ոչ մէկն է տեղում, ոչ էլ միւսը, բայց կեանքն առջեւում է, չնահանջես, մենք քեզ կը պաշտպանենք արդարութեան կռուում: Ձեր արդարութիւնը սկսուում է մեղայականից:

Մի իրաւունքի մասին էլ պատմեմ փեսին ու փեսիստներին, գեալմաբէխապարին ու գեալմիստներին, սերժիկին ու սերժիստներին, բազազներին ու մալեարներին, Արփիկին ու Գալուստին՝ մանաւանդ: Դուք իրաւունք ունէք խօսել-գրել-քանդակել ինչ կը կամենաք, դուք իրաւունք ունէք իմանալու, որ այն ամէնը, ինչ կը խօսէք, կարող է օգտագործուել ձեր դէմ անկախ ձեր կամքից, այն ամէնը, ինչ կը խօսէք, կարող է ջրի երես հանել ձեր բուն էութիւնը: Կարող էք եւ չխօսել, բայց դա եւս կարող է ձեր դէմ օգտագործուել: Այնպէս որ, ձեզ կարող է օգնել իսկական ապաշխարհանքն ու փոստանքը, անկեղծ զղջումն ու հրապարակային ներողութիւնը, գոնէ ժամանակաւոր հրաժարումը ինչ-ինչ զառանցական յաւակնութիւններէ, վերամբարձ ամբարտաւանութիւնից, անհեթեթ գոռոզամտութիւնից: Անցել են այն ժամանակները, երբ դուք էիք միակ ճշմարիտը, սրբութեան դարբնոցը, ակունքն իմաստութեան, եւ ով ձեզ հետ համաձայն չէր՝ թշնամի էր, պիտի վերացուէր կամ լռեցուէր:

Այս է պատասխանն իմ, վրէժխնդրութիւնն ու հաշտեցարդարը եթէ կ'ուզէք, ոչինչ աւելի:

«Յեղափոխութիւնը Հայաստանում դեռ անխուսափելի է»: Շատ վախեցանք, սարսափեցինք: Գաղտնիք բացեմ, դեռ շատ յեղափոխութիւններ են լինելու. անպատեթիւները պատժուելու են, թաւանողները սովելու են, ապօրինի հարստացածները հարստահարուելու են, տարուածը ետ է բերուելու, աղքատները ունեւոր են լինելու, ճամբեքը սարքուելու են, կաշառակերները բանտ են նստելու, մարդասպանները ցմահ են բանտարկուելու... ու էլի լիքը յեղափոխութիւն է լինելու: Մենք վախեցած

արծած ենք, մենք ուրիշ ու սերժիկ տեսած ազգ ենք, մեզ անհնար է վախեցնել այլեւս, բայց փեսան տեղեակ չէ:

Յեղափոխութիւնները լաւ օրից չէ, որ լինում են: Արդար կառավարումը յեղափոխութիւններ թող չտալու ամենաարդիւնաւէտ եղանակն է: Տասնամեակներով բաւել ենք, թէ այդպէս չի կարելի, սա երկիր պահել չէ, որ դուք էք պահում, զգուշացրել ենք, թէ ինչ է լինելու դրա վերջը, բացատրել ենք, որ յետոյ ողբալու էք, թէ վրէժխնդիր են լինում, ասելու էք. «հրաման էինք կատարում, մենք մեղաւոր չենք...», բանի տեղ չէք դրել: Բղաւել ենք, ձեզ պէս բերաններս ջուր չենք առել, որ յետոյ, երբ լափամանը տանեն առաջներիցս, ողբ կապենք, ասելով, թէ սա յեղափոխութիւն չէր, սա իշխանափոխութիւնն էր ու հաշտեցարդար: Պարապ էինք ըստ ձեզ, ուղում էինք բանտերում փութի հա՞: Չէ, ընդամենը ուզել ենք արդար կառավարում, որ մեր փողերը, հողերը, հանքերն ու մնացած ունեցուածքը չուտեն իշխանութիւնները, կեղծիքներով աթոռներ ու պաշտօններ գրաւած շնաձկները: Չհասկացաք, շան տեղ չդրեցիք, ծեծեցիք ու բանտարկեցիք, քեցիք երկրից ու սատկացրիք, եւ հիմա զարմանում էք, որ յեղափոխութիւն է եղել: Բա կարծում էիք հաւի ձա՞ղ էինք, իսկապէ՞ս յոյս ունէիք, որ մեզ ցմահ կուսցած էիք պահելու, ճերմակ օձիքներով դեսպաննախարար խաղալով, կադրիլակ ուտելով ու սեւ խաւիար քշելով, կամ հակառակը: Բացէք եւ կարդացէք մամուլի արխիւները, պատշաճօրէն զգուշացուած էք եղել: Այդ սերժիկներն ու ուրիշներն էին, որ առանց զգուշացնելու էին անում, ինչ անում էին:

Ինչ կարելի է խորհուրդ տալ նախկին դեսպաններին, նախկին նախարարներին, նախկին նախագահներին ու նախկին վարչապետին, իրենց վարորդներին, գրիչներին ու գրաքննիչներին, որ սկսել են ողբ կապել Գաբրիէլ հրեշտակապետի ճամբին: Շատ քիչ բան: Մի կուսակցութիւն ստեղծէք, մտէք քաղաքական պայքարի մէջ, կարող է դուք ճիշտ էք, առաջ բեւեռացուած էր, բայց դրախտ էր, հիմա վրէժ է

«Յիշատակարանը Ձեռագրաց»

Շարունակուած էջ 15-էն

կոթողային այդ աշխատութեան մէջ, ուր կարեւոր յատկանիշներ կ'առանձնացնէին Գաբրիէլի Հայրապետը ու կը գատորոշէին զինք նման այլ հրատարակութեանց բաղդատմամբ: Անոնք ինքնին առանձին յողուածներ են նոյնիսկ, ինքնատիպ ուսումնասիրութիւններ, որոնք «Բացատրական յաւելուածները ըլլալով այս մեծ հաւաքածոն դարձուցած են հայ մշակույթի յատուկ աղբիւրագիտութիւն: Գիտնական Տէր Ներսէսեան կը յատկանշէ թէ «հեղինակին լայն գիտութիւնը կը յայտնուի ամենափոքր դիտողութիւններու մէջ՝ իր աւելցուցած բացատրութիւններով»:

Իր դիտարկութեամբ Տէր Ներ-

սէսեան կարեւոր պարագայ մը եւս կը նշէ թէ Հայրապետ Հեղինակը յաճախ դիտմամբ խուսափած է կանգ առնելու ձեռագիրներու գեղարուեստական եւ մանրանկարչութեանց քննութիւնը կատարելէ, միշտ ի մտի ունենալով «գունաւոր նկարներու ալպոմի ձեւով ի լոյս ընծայել, պարագայ մը որ չիրագործուեցաւ դժբախտաբար, հակառակ անոր որ Գաբրիէլի կաթողիկոս պատրաստած էր արդէն գանոնք»: Այս կը նշանակէ որ ձեռագիրներէն շատերը ունին իրենց մանրանկարչութիւնները, նոյնիսկ շատ յայտնի նկարիչներէ, որոնց մասին Հայրապետը առանձինն պիտի անդրադառնար յատուկ հրատարակութեամբ: Միւրաբի Տէր Ներսէսեան կ'ափսոսար որ այդ մէկը կարելի չեղաւ իրականացնել:

ու անարդարութիւն: Մտէք քաղաքականութեան մէջ, կռիւ տուէք, շահէք հանրութեան համակրանքը, հալպաթ կը յաղթէք՝ հերթական կամ արտահերթ ընտրութիւններում, կը գաք փառահեղօրէն երկիրը կը կառավարէք: Դեկտեմբերին բոլորը իրար հետ միասին, հազիւ 10 տոկոս ստացաք: Էլի բան էր: Հիմա՝ կարող է արդէն 150 տոկոս ունէք, ու այդ դէպքում անարդար է կառավարումից զուրկ մնալը: Փորձէք, ի՞նչ է պատահել: Կուսակցութիւն էք փորձել գրանցել, չէ՞ն թողել, փողով առե՞լ են իշխանութիւնները շատերիդ, սպառնացել

են ոչնչացնե՞լ մայրուամուկով, եթէ քաղաքական պայքարի մէջ մտնէք: Անխ գուցէ զանգուածային լրատուամիջոցներ չունէք, որ հանրային քարոզ անէք, կամ էլ գուցէ փողն է քչութիւն անում, համակիրներ չիդ ձեռքերը քարի տակ է փաստօրէն: Մի քանի ապրանք ծախէք՝ բոլոր կուսակցութիւնների բոլոր անդամների հաւաքական ունեցուածքից շատ փող կ'ունենաք, բա՛ւ է նուաք:

Միւս խորհուրդն անհամեմատ հին է. «Չգիտէք ինչ անել, մի քիչ մտածէք, սուս մնացէք, որ լաւ մտածէք»:

ՅԱԻԱԿՑԱԿԱՆ
ԱՏԻՍ ՀԱՐՄԱՆՏԵԱՆԻ մահուան տխուր առիթով «Մասիս» իր խորագրաց ցաւակցութիւնները կը յայտնէ հանգուցեալի ընտանեկան համայն պարագաներուն եւ բարեկամներուն:

ՎԱՐՁՈՒ ՄՐԱՇ
ՓԱՍՍՏԻՆԱՅԻ ՄԷՋ (200 ԸՈԳԻ ԸԱՄԱՐ)
ԱՄԷՆ ՏԵՍԱԿ ԱՌԻԹՆԵՐՈՒ ԸԱՄԱՐ
1060 N. ALLEN AVE. PASADENA CA 91104
(626) 797-7680

INNOVATIVE
Designs  Manufacturing, Inc.



idmifurnishings.com

PUBLIC MEETING WITH PRIME MINISTER OF ARMENIA
ՀԱՆՐԱՅԻՆ ՀԱՆԴԻՊՈՒՄ ՀՀ ՎԱՐՉԱՊԵՏԻ ՀԵՏ



SUNDAY SEPTEMBER 22, 2019 AT 2:00 PM
ԿԻՐԱԿԻ ՍԵՊՏԵՄԲԵՐ 22, 2019 AT 2:00 PM

ԳՐԱՆԴ ՓԱՐԶ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻՆ ՀԱՐԱԿԻՑ

GRAND PARK AT

LOS ANGELES CITY HALL

200 N. SPRING STREET LOS ANGELES, CA 90012

CO-ORGANIZED BY

**CONSULATE GENERAL OF ARMENIA
AD-HOC COMMITTEE OF ARMENIAN ORGANIZATIONS
MAYOR ERIC GARCETTI
COUNCILMEMBER PAUL KREKORIAN
LA COUNTY SUPERVISORS KATHRYN BARGER & HILDA L. SOLIS**

ՄԻՋՈՑԱՌՄԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊԻՉՆԵՐ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍՈՒՄ ՀՀ ԳԼԽԱՎՈՐ ՀՅՈՒՊԱՏՈՍՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ՀԱՆՁՆԱԽՈՒՄԲ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ ԷՐԻԿ ԳԱՐՍԵԹԻ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄ ՓՈԼ ԿՐԵԿՈՐԻԱՆ

ԼՈՍ ԱՆՋԵԼԵՍԻ ՄԱՐԶԻ ԿԱՌԱՎԱՐԻՉՆԵՐԻ ԽՈՐՀՐԴԻ ԱՆԴԱՄՆԵՐ ՔԵԹՐԻՆ ԲԱՐԳԵՐ և ՀԻԼԴԱ ՍՈԼԻՍ



